ՀԱՎԵԼՎԱԾ

ԵՄ-ՀԱՅԱՍՏԱՆ ԵՀՔ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2004թ. մայիսի 1-ին Եվրոպական միության ընդլայնումը ԵՄ համար քաղաքական, աշխարհագրական և տնտեսական առումով պատմական իրադարձություն էր, որն էլ ավելի ամրապնդեց Հայաստանի և ԵՄ միջև քաղաքական և տնտեսական փոխկապակցվածությունը: Դա հնարավորություն է ընձեռում ԵՄ-ին և Հայաստանին զարգացնել համագործակցության շրջանակներից դուրս եկող ավելի սերտ հարաբերություններ՝ ներառելով նշանակալի չափով տնտեսական ինտեգրացիա և քաղաքական համագործակցության խորացում: Եվրամիությունը և Հայաստանը վճռական են օգտվել այս առիթից՝ իրենց հարաբերությունների ամրապնդման, ինչպես նաև կայունության, անվտանգության ու բարեկեցության խթանման համար: Այս մոտեցումը հիմնված է գործընկերության, համատեղ սեփականության և տարբերակման սկզբունքների վրա:

Եվրամիության Եվրոպական հարևանության քաղաքականությունը հավակնոտ նպատակներ է սահմանում՝ հիմնվելով ընդհանուր արժեքների նկատմամբ կողմերի նվիրվածության և քաղաքական, տնտեսական, սոցիալական ու ինստիտուցիոնալ բարեփոխումների արդյունավետ իրականացման վրա:

Հայաստանին առաջարկվում է քաղաքական, անվտանգության, տնտեսական և մշակութային ինտենսիվ հարաբերություններ հաստատել ԵՄ-ի հետ, ամրապնդել տարածաշրջանային և սահմանամերձ համագործակցությունը, ինչպես նաև պատասխանատվություն վերցնել հակամարտությունների կանխարգելման և կարգավորման գործում:

Այս հարաբերությունների հավակնությունների մակարդակը պայմանավորված կլինի ընդհանուր արժեքներին Հայաստանի նվիրվածության աստիճանով, ինչպես նաև փոխադարձաբար համաձայնեցված և միջազգային ու եվրոպական նորմերին ու սկզբունքներին համահունչ առաջնայնությունների իրականացման իր կարողությամբ: Հարաբերությունների առաջընթացի տեմպը լիովին կարտացոլի Հայաստանի ներդրած ջանքերը և վերը նշված հանձնառությունների կատարման ուղղությամբ արձանագրված ձեռքբերումները:

Գործողությունների ծրագիրը այդ գործընթացի առաջին քայլն է: ԵՄ-Հայաստան Գործողությունների ծրագիրը քաղաքական փաստաթուղթ է, որում ուրվագծվում են Հայաստանի և ԵՄ միջև համագործակցության ռազմավարական նպատակները:

Այն նախատեսված է հինգ տարի ժամանակահատվածի համար: Դրա իրականացումը կնպաստի Գործընկերության և համագործակցության համաձայնագրի դրույթների իրականացմանը, նոր բնագավառներում կապերի ձևավորմանը և կխրախուսի ու կաջակցի եվրոպական տնտեսական և սոցիալական համակարգերում Հայաստանի հետագա ինտեգրմանը:

Գործողությունների Ծրագրի իրականացումը նշանակալիորեն կնպաստի Հայաստանի օրենսդրության, նորմերի և ստանդարտների ներդաշնակեցմանը Եվրոպական միության չափանիշներին: Այս համատեքստում, ամուր հիմք կստեղծի հետագա տնտեսական ինտեգրացիայի համար՝ հիմնվելով տնտեսության և առևտրի բնագավառում կանոնների և դրույթների ընդունման և կիրառման վրա, որոնք կխթանեն առևտուրը, ներդրումները և տնտեսական աճը: Ծրագիրը կօգնի մշակել և իրականացնել այնպիսի քաղաքականություն և միջոցառումներ, որոնք ուղղված կլինեն տնտեսական աճին, սոցիալական ներդաշնակեցմանը, աղքատության նվազեցմանը և շրջակա

միջավայրի պահպանությանը՝ ներդրում բերելով կայուն զարգացման երկարաժամկետ նպատակին:

Հայաստանը և ԵՄ-ն սերտորեն կհամագործակցեն տվյալ Գործողությունների ծրագրի իրականացման ուղղությամբ:

Հարավային Կովկասում ԵՄ հատուկ ներկայացուցիչը, իր մանդատի շրջանակներում կօժանդակի համապատասխան մարմիններին՝ Գործողությունների ծրագրի իրականացման գործում:

Եվրոպական Միությունը ի գիտություն է ընդունում Հայաստանի կողմից արտահայտված եվրոպական ձգտումները և աջակցելու է Հայաստանի Կառավարությանը՝ շարունակել Եվրոպական Միության վերաբերյալ հասարակության իրազեկության բարձրացման գործում, ներառյալ Երևանում Եվրոպական տեղեկատվական կենտրոն ստեղծելու և Եվրոպական ինտեգրացիայի վերաբերյալ Կառավարության տեղեկատվական ռազմավարության մշակմանն օժանդակելու միջոցով:

2. ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

Եվրոպական հարևանության քաղաքականությունը բացում է նոր գործընկերության հեռանկարներ.

- Համագործակցությունից դեպի առավել բարձր մակարդակի ինտեգրացիայի հնարավորություն, ներառյալ ԵՄ ներքին շուկայում և առանցքային ուղղություններով ԵՄ քաղաքականությունում և ծրագրերում Հայաստանի մասնակցության հնարավորություն:
- Քաղաքական համագործակցության շրջանակների ընդլայնում և խորացում՝ քաղաքական երկխոսության համար մեխանիզմների հետագա զարգացման միջոցով:
- ԵՄ շարունակական հանձնառություն՝ աջակցելու Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորմանը, օգտվելով ԵՄ համար մատչելի գործիքներից, ԵԱՀԿ հետ սերտ խորհրդակցությամբ: Եվրամիությունը պատրաստ է դիտարկել հակամարտության կարգավորման և հետհակամարտային վերականգնողական գործընթացներին իր ներգրավվածության հետագա ամրապնդման ուղիները:
- Առևտրային և տնտեսական հարաբերությունների խորացում, տնտեսական օրենսդրության ներդաշնակեցման հնարավորության ընձեռում, միմյանց համար տնտեսությունների բացում, առևտրային ոչ-տարիֆային արգելքների շարունակական կրճատում, ինչը կնպաստի ներդրումների, արտահանման և տնտեսության աճին:
- Հավելյալ ֆինանսական աջակցություն. ԵՄ ֆինանսական աջակցությունը Հայաստանին նախատեսված կլինի տվյալ փաստաթղթում նշված գործողությունների իրականացմանն աջակցելու համար: Եվրոպական հանձնաժողովը նույնպես առաջարկում է Եվրոպական հարևանության և գործընկերության գործիք (European Neighbourhood and Partnership Instrument – ENPI), որը կներառի ԵՄ ֆինանսական աջակցության հիմնական մասը և կօգտագործվի նաև անդրսահմանային և տարազգային համագործակցության նպատակների համար: Եվրոհանձնաժողովը նաև կառաջարկի, որ Եվրոպական ներդրումային բանկի լիազորությունները տարածվեն Հայաստանի վրա 2007 թ-ից:
- Տնտեսական, մշակութային, կրթական, բնապահպանական, տեխնիկական և գիտական կապերին նպաստող Եվրոհամայնքի որոշ ծրագրերի աստիճանաբար բացման և/կամ դրանց շրջանակներում ավելի լայն մասնակցության հնարավորություն:
- Աջակցություն, ներառյալ տեխնիկական և «թվինինգ» ծրագրերի միջոցով՝ ԵՄ նորմերին և ստանդարտներին համապատասխանելու հարցում, օրենսդրական ներդաշնակության ապահովման համար նպատակային խորհրդատվություն և օժանդակություն՝ համապատասխան մեխանիզմների, օրինակ TAIEX-ի միջոցով:
- Acquis-ին (ԵՄ ընդհանուր օրենսդրություն) համապատասխան՝ երկխոսություն սկսել ԵՄ-ի և Հայաստանի միջև մարդկանց տեղաշարժին, ներառյալ ռեադմիսիային և մուտքի վիզային առնչվող հարցերի շուրջ,

Գործողությունների ծրագրի նպատակների իրականացման և ԵՄ-Հայաստան հարաբերությունների ընդհանուր զարգացման լույսի ներքո պատշաճ ժամանակ կուսումնասիրվի նոր խորացված պայմանագրային հարաբերությունների հաստատման հնարավորությունը:

3. ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գործողությունների ծրագիրը սահմանում է Գործընկերության և համագործակցության համաձայնագրի շրջանակներում ընդգրկված և դրանից դուրս գոյություն ունեցող առաջնայնությունների համապարփակ շրջանակ: Այդ առաջնայնություններից, որոնք բոլորը կարևոր են, առանձնահատուկ ուշադրություն է դարձվելու հետևյալ ոլորտներին և հատուկ գործողություններին.

Առաջնային ոլորտ 1.

Ժողովրդավարական կառույցների, օրենքի իշխանություն ամրապնդում, ներառյալ դատաիրավական համակարգի բարեփոխումներ և խաբեությունների ու կոռուպցիայի դեմ պայքար:

Հատուկ գործողություններ.
- Ապահովել Սահմանադրական բարեփոխումների պատշաճ իրականացումը՝ ապահովելու իշխանության տարանջատումը, դատաիրավական համակարգի անկախությունը և տեղական ինքնակառավարման գործունեությունը,
- Զարգացնել Մարդու իրավունքների պաշտպանի՝ Օմբուդսմենի ինստիտուտը 1993թ. ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 48/134 բանաձևի վրա հիմնված «Փարիզյան սկզբունքներին» համապատասխան,
- ապահովել ընտրական համակարգի գործունեությունը ԵԱՀԿ և ժողովրդավարական ընտրությունների անցկացման այլ միջազգային չափանիշներին լրիվ համապատասխանությամբ՝ ԵԱՀԿ-ԺՀՄԻԳ-ի և ԵԽ Վենետիկի հանձնաժողովի առաջարկություններին համահունչ ընտրական օրենսգրքի փոփոխությունների և ընտրական վարչակարգի բարելավման միջոցով (2006թ. ընթացքում),
- Սահմանադրական փոփոխություններից հետո (իշխանությունների բաժանման և դատաիրավկան իշխանության անկախության վերաբերյալ) մշակել/արդիականացնել դատավորների կարգավիճակի, դատաիրավական համակարգի և Արդարադատության խորհրդի մասին համապատասխան օրենքները (2006թ. ընթացքում),
- Սահմանադրական փոփոխություններից հետո (իշխանությունների բաժանման և դատաիրավական համակարգի անկախության վերաբերյալ) մշակել/արդիականացնել դատախազության մասին օրենքը, որը կոչված է ամրապնդելու դատախազների անկախության, անկողմնակալության, նշանակման և առաջխաղացման ընթացակարգերը, ինչպես նաև նրանց լիազորությունների ծավալը,
- ապահովել Արդարադատության խորհրդի անկախությունն օրենսդրական և գործադիր իշխանություններից, և որ Խորհուրդը երաշխավորի դատական մարմինների անկախությունը և հանդիսանա դատավորների և մագիստրոսների գործունեությանը վերաբերող հարցերով միակ և վերջնական ատյան (2006թ. ընթացքում),
- բարելավել իրավական և մասնավորապես անվճար իրավական օգնության համակարգը՝ կատարելագործելով և ամրապնդելով փաստաբանների համակարգը, և զարգացնել իրավաբանության բնագավառում երիտասարդ շրջանավարտների պրոֆեսիոնալ պրակտիկան,
- հիմնել Վարչական դատարաններ,
- գնահատել ազգային Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման համար համապատասխան Գործողությունների ծրագրի իրականացման առաջընթացը և

ապահովել քաղաքացիական հասարակության ու գործարար աշխարհի ներկայացուցիչների ակտիվ մասնակցությունը դրա իրականացման մոնիտորինգի գործում (2006թ. ընթացքում):
- գնահատել քաղաքացիական ծառայության համակարգի ներդրման և կայացման գործընթացը և ապահովել Եվրոպական չափանիշներին համապատասխան քաղաքացիական ծառայության համակարգի շարունակական կատարելագործումը (2006 թ-ի ընթացքում):

Առաջնային ոլորտ 2.

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հարգում՝ Հայաստանի միջազգային պարտավորություններին համապատասխան (ԳՀՀ, ԵԽ, ԵԱՀԿ, ՄԱԿ):

Հատուկ գործողություններ.
- ապահովել մամուլի անկախությունը՝ ամրապնդելով անկախ կարգավորիչ մարմինը հանրային և մասնավոր հեռարձակողների համար, որը պատասխանատու կլինի հեռահաղորդակցության արտոնագրերի տրամադրման և վերահսկման համար,
- ապահովել հավաքներ կազմակերպելու ազատությունը՝ միջազգային պարտավորությունների և Եվրոպայի խորհրդի ու ԵԱՀԿ առաջարկությունների համաձայն՝ շարունակելով կատարելագործել հանրահավաքների և ցույցերի մասին օրենքը,
- ապահովել անձնական սեփականության իրավունքի պաշտպանությունը,
- բանտային համակարգի հետագա բարեփոխում՝ խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման Եվրոպական կոմիտեի առաջարկություններին համապատասխան՝ ազատազրկման պայմանների բարելավման նպատակով,
- սերտորեն համագործակցել ԵԱՀԿ և Եվրոպայի Խորհրդի հետ ոստիկանության բարեփոխման գործում՝ խոշտանգումների, այլ վատ վերաբերմունքի և կոռուպցիայի վերացման, ինչպես նաև ոստիկանության ու հասարակության միջև առավել վստահության հաստատման նպատակով:
- համագործակցել Եվրոպական կառույցների հետ՝ Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի շրջանակներում ՀՀ ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով,
- ձեռնարկել քայլեր Եվրոպական սոցիալական ապահովության օրենսգրքին, դրա Արձանագրություններին և վերանայված տարբերակին միանալու ուղղությամբ:

Առաջնային ոլորտ 3.

Խթանել հետագա տնտեսական զարգացումը, ավելացնել ջանքերն աղքատության նվազեցման և սոցիալական ներդաշնակեցման հարցերում, այդպիսով ներդրում բերելով կայուն զարգացման երկարաժամկետ նպատակներին, այդ թվում՝ շրջակա միջավայրի պահպանությանը:

Հատուկ գործողություններ.
- պահպանել մակրոտնտեսական կայունությունը ողջամիտ դրամային և ֆիսկալ քաղաքականության իրականացման և Միջազգային ֆինանսական հաստատությունների հետ համագործակցության միջոցով,
- շարունակել հարկային պարտքերի կրճատումը,
- շարունակել իրականացնել Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը, որը կծառայի որպես ուղենշային քաղաքականության շրջանակ աղքատության կրճատմանը միտված միջնաժամկետ տնտեսական աճի և հարստության հավասար բաշխման համար՝ երկրի կարիքներին համապատասխան,

- շարունակել բարելավել գյուղատնտեսությունը, գյուղական ենթակառուցվածքները, ջրային պաշարները/պաշարների կառավարումը, սոցիալական պաշտպանությունը և կրթությունը որպես աղքատության դեմ հետագա պայքարի միջոց ,
- շարունակել բարեփոխումներն աշխատանքի և սոցիալական անվտանգության ու սոցիալական պաշտպանության բնագավառներում,
- ամրապնդել Հանրային զբաղվածության ծառայությունների, աշխատանքի տեսչության և սոցիալական ծառայությունների գործակալությունների վարչական կարողությունները, մասնավորապես տարածքային մակարդակով,
- շարունակել երեխաների իրավունքների պաշտպանության բնագավառում ծրագրերի իրականացումը,
- շարունակել բարեփոխումներն առողջապահության ոլորտում ,
- շարունակել ջանքերը կրթության, միջնակարգ մասնագիտական ուսուցման, ինչպես նաև շարունակական/տարեց անձանց կրթության ոլորտներում բարեփոխումների իրականացման ուղղությամբ (խթանելու ԱՀՌԾ հենասյուներից մեկի՝ մարդկային ռեսուրսների զարգացումը),
- տեղական մակարդակով վարչական գրանցումների կատարելագործման միջոցով բարելավել վիճակագրական տվյալները՝ ապահովելու համար ԱՀՌԾ-ի ավելի արդյունավետ դիտանցումը ,
- վարչական կառույցների և ընթացակարգերի ամրապնդմամբ ապահովել բնապահպանական խնդիրների ռազմավարական պլանավորումը և շահագրգիռ մարմինների գործունեության համակարգումը,

Առաջնային ոլորտ 4.

Ներդրումային մթնոլորտի հետագա բարելավում և մասնավոր սեկտորով առաջնորդվող աճի ամրապնդում:

Հատուկ գործողություններ.
- մշակել և իրականացնել գործարար միջավայրի բարելավման համապարփակ ծրագիր, որով մասնավորապես կբարելավվի բիզնես հիմնադրելու, աշխատանքի ընդունելու և աշխատանքից ազատելու, սեփականություն գրանցելու, վարկեր ստանալու, ներդրողներին պաշտպանելու, պայմանագրեր կատարելու և բիզնեսը փակելու պայմանները,
- շարունակել հարկային վարչարարության արդիականացումը և պարզեցումը, բարելավել հարկային համակարգի ներդաշնակությունը և վստահելիությունը, նվազեցնել կոռուպցիոն ռիսկերը և ստվերային տնտեսությունը: Սահմանել անհրաժեշտ վարչական կառուցվածքներ և ընթացակարգեր, ներառյալ ֆինանսական վերահսկողության ռազմավարությունը, աուդիտի և հետաքննության մեթոդները, համագործակցությունը հարկատուների հետ՝ հարկերի համապատասխանելիությունը և հարկահավաքման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով: Որոշել բոլոր ֆինանսական, կադրային, նյութատեխնիկական և տեղեկատվական տեխնոլոգիաների կարիքները,
- Շարունակել աշխատանքները ՀՀ և ԵՄ անդամ պետությունների միջև երկակի հարկումներից խուսափելու մասին համաձայնագրերի կնքման գործընթացն ավարտին հասցնելու ուղղությամբ, ներառյալ միջազգային չափանիշներին համապատասխան թափանցիկության բարելավումը և տեղեկատվության փոխանակումը,
- ամրապնդել մաքսային վարչարարության ընդհանուր վարչական կարողությունները, մասնավորապես՝ մաքսային կանոնների, ընթացակարգերի և տարիֆների թափանցիկությունն ավելացնելու, մաքսային գնահատման կանոնների ճշգրիտ կիրառումն ապահովելու, ռիսկի վրա հիմնված մաքսային վերահսկողության և հետբացթողումային սկզբունքները կյանքի կոչելու համար: Բավարար չափով ապահովել մաքսային ծառայությունը ներքին և արտաքին լաբորատոր փորձաքննությամբ, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում գործադրելի կարողությամբ,

- իրականացնել Մաքսային էթիկայի քաղաքականություն,
- ստեղծել այնպիսի մեխանիզմներ, որոնք կապահովեն արտահանման և ներմուծման կանոնների ու կանոնակարգերի վերաբերյալ կանոնավոր խորհրդակցությունների անցկացում և տեղեկատվության փոխանակում գործարար շրջանում:

Առաջնային ոլորտ 5.

Տնտեսական օրենսդրության և վարչարարության հետագա մոտարկում:

Հատուկ գործողություններ.
- Պրոգրեսիվ կերպով իրագործել ԳՀՀ իրականացման Ազգային ծրագիրը (սկիզբը 2006թ., բայց երկարաժամկետ ծրագիր է):
- Որպես կոմերցիոն վեճերի լուծման ալտերնատիվ տարբերակ, օրենքով սահմանել միջազգային չափանիշներին համապատասխանող արբիտրաժային ընթացակարգեր:

Առաջնային ոլորտ 6.

Էներգետիկ ռազմավարության մշակում, ներառյալ Մեծամորի ատոմակայանի հնարավորինս շուտ փակում:

Հատուկ գործողություններ.
- ընդունել (2007թ.) և սկսել կիրառել համապարփակ Ազգային Էներգետիկ ռազմավարություն, որն աստիճանաբար կհամապատասխանեցվի ԵՄ էներգետիկ քաղաքականության նպատակներին: Ռազմավարությունը պետք է նպատակաուղղված լինի էներգետիկ ոլորտի զարգացմանը, արդիականացմանը և ժամանակակից արդյունավետ էներգետիկ տեխնոլոգիաների ներդրմանը, ինչպես նաև էներգետիկ ոլորտի բարեփոխումների արագացմանը, այդ թվում՝ սահմանի Մեծամորի ատոմակայանի վաղաժամ փակման ժամկետը: Այն պետք է հաշվի առնի ատոմակայանի շուտ փակման հետևանքները և պետք է անդրադառնա էներգետիկ ոլորտի անվտանգության իրատեսական մակարդակի ապահովմանը, ներառյալ էներգետիկ պաշարների ներկրման ուղիների և դրանց տեսակների դիվերսիֆիկացիայի խնդրին, բազային ռեժիմի հզորության և սեփական ռեսուրսների, այդ թվում հիդրոէներգետիկայի զարգացմանը, էներգետիկ արդյունավետության և վերականգնվող էներգիայի աղբյուրների օգտագործմանը: Ռազմավարությունը պետք է նաև ապահովի էներգետիկայի ոլորտի ընթացակարգերի և գործունեության թափանցիկությունը,
- ընդունել ռադիոակտիվ թափոնների կառավարման ռազմավարություն,
- շարունակել համագործակցությունը Մեծամորի ատոմակայանի վաղաժամկետ փակման ուղղությամբ,
- Մեծամորի ատոմակայանի փակման համար մշակել և ընդունել իրավական ու տեխնիկական միջոցառումներ, ներառյալ փակման ծրագիր՝ ժամանակացույցով և յուրաքանչյուր միջոցառման ծախսերի գնահատականով (սկսել 2006թ., ավարտել 2007թ.),
- շարունակել համագործակցությունը Մեծամորի ատոմակայանում՝ նպաստելու համար մինչև փակումը շահագործման անվտանգությանը, ինչպես նաև շարունակել աջակցել Ատոմային էներգիայի օգտագործման միջուկային և ռադիացիոն անվտանգության տեսչությանը՝ ապահովելու վերջինիս անկախությունը և տեխնիկական կոմպետենտությունը,
- 2006թ. ստեղծել ատոմակայանը փակելու հիմնադրամ, որն անհրաժեշտ է վերը նշված փակման միջոցառումների իրականացման համար, և սկսել համապատասխան ներդրումներ կատարել այդ հիմնադրամում (սկսած 2006թ.),

- Շարունակել երկխոսությունը հնարավոր ֆինանսավորման, շահագործումից հանելու և Մեծամորի ԱԷԿ-ի վաղաժամ փակման հետևանքների վերացման վերաբերյալ, ներառյալ փոխարինումը բազային ռեժիմի հզորություններով:

Առաջնային ոլորտ 7.

Նպաստել Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորմանը:

Հատուկ գործողություններ.
- ավելացնել դիվանագիտական ջանքերը, ներառյալ Հարավային Կովկասում ԵՄ Հատուկ ներկայացուցչի միջոցով, և շարունակել աջակցել Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ լուծմանը,
- ավելացնել քաղաքական աջակցությունը ԵԱՀԿ Մինսկի խմբին՝ միջազգային նորմերի և սկզբունքների, ներառյալ ժողովուրդների ինքնորոշման սկզբունքի հիման վրա հակամարտության կարգավորման ուղղությամբ տարվող ջանքերում,
- խթանել մարդկային շփումները,
- խորացնել ԵՄ երկխոսությունը շահագրգիռ կողմերի հետ՝ քաղաքական կարգավորմանն ուղղված բանակցություններն արագացնելու նպատակով:

Առաջնային ոլորտ 8.

Ավելացնել ջանքերը տարածաշրջանային համագործակցության բնագավառում:

Հատուկ գործողություններ.
- շարունակել ջանքերը հարևան երկրների հետ համագործակցությամբ տարածաշրջանային և այլ հարակից խնդիրների կարգավորման ուղղությամբ, ինչպես նաև խթանել հաշտեցումը,
- ընդլայնել մասնակցությունը Հարավային Կովկասի տարածաշրջանային համագործակցության նախաձեռնություններում, օրինակ՝ շրջակա միջավայրի, ջրային ռեսուրսների կառավարման, էներգետիկայի, կրթության, սահմանների կառավարման, տրանսպորտի և տրանսպորտային հաղորդակցության, ինչպես նաև խորհրդարանական կապերի ոլորտներում՝ աջակցելու նշված բնագավառներում համագործակցությանը,
- շարունակել համագործակցությունն էներգետիկայի և տրանսպորտի բնագավառում՝ ԵՄ/Սևծովյան/Կասպյան ավազանների երկրների և դրանց հարևանների նախաձեռնության շրջանակներում,
- ամրապնդել Հայաստանի մասնակցությունը Հարավային Կովկասում տարածաշրջանային իրավապահպանության բնագավառի համագործակցության նախաձեռնություններում, ներառյալ ԵՄ կողմից ֆինանսավորվող աջակցության նախաձեռնություններում, ինչպիսին է օրինակ SCAD-ը (Հարավային Կովկասի թմրանյութերի վերաբերյալ գործողությունների ծրագիր),
- աջակցել Բնապահպանության կովկասյան տարածաշրջանային կենտրոնին՝ տարածաշրջանի կառավարական և հասարակական կազմակերպությունների համագործակցության զարգացման գործում, ինչպես նաև ակտիվացնել մասնակցությունը կենտրոնի աշխատանքներում,
- ընդլայնել երկկողմ և բազմակողմ համագործակցությունը Սևծովյան տարածաշրջանում, որը կներառի ՍԾՏՀ-ի հետ շարունակական հարաբերման միջոցով խորացված տարածաշրջանային տնտեսական համագործակցություն, և Սևծովյան և Բալթյան տարածաշրջանների միջև,
- ընդլայնել հարավկովկասյան երեք երկրների միջև երիտասարդների փոխանակումը և համագործակցությունը, ներառյալ հատկապես ԵՄ կողմից ֆինանսավորվող ծրագրերի և նախաձեռնությունների միջոցով:

Այս առաջնայնությունների ուղղությամբ առաջընթացին կհետևեն Գործընկերության և համագործակցության համաձայնագրի շրջանակներում ստեղծված մարմինները, Եվրոպական հանձնաժողովը կպատրաստի միջնաժամկետ զեկույց արձանագրված առաջընթացի վերաբերյալ: Այդ գնահատականի հիման վրա ԵՄ-ն Հայաստանի հետ միասին կվերանայի Գործողությունների ծրագրի բովանդակությունը և որոշում կկայացնի դրա արդիականացման և նորացման վերաբերյալ: Հինգ տարվա ժամկետի ավարտին մոտ Հանձնաժողովը կհրապարակի երկրորդ զեկույցը, որի հիման վրա կարող է որոշում կայացվել երկկողմ հարաբերությունների զարգացման հետագա քայլի, այդ թվում՝ նոր խորացված պայմանագրային կապեր հաստատելու հնարավորության վերաբերյալ:

4. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆՊԱՏԱԿՆԵՐ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ներքոհիշյալ գործողությունները շատ դեպքերում լրացնում են վերը թվարկված առաջնային գործողություններին:

4.1 Քաղաքական երկխոսություն և բարեփոխումներ

4.1.1. Ժողովրդավարություն և օրենքի գերակայություն, մարդու իրավունքներ և հիմնարար ազատություններ

Ժողովրդավարություն և օրենքի գերակայություն երաշխավորող ինստիտուտների կայունության և արդյունավետության ամրապնդում:

Ժողովրդավարական ինստիտուտների ամրապնդում.

- Եվրոպական ստանդարտներին համապատասխան ամրապնդել տեղական ինքնակառավարումը, ներառյալ տեղական համայնքները ու քաղաքացիական ծառայության ինստիտուտները, և ապահովել Տեղական Ինքնակառավարման Եվրոպական Խարտիայի կիրառումը,
- ամրապնդել քաղաքական բազմակարծություն՝ Հայաստանյան և ԵՄ քաղաքական կուսակցությունների և օրենսդիր մարմինների միջև համագործակցության խրախուսման միջոցով,
- հաստատել հստակ և թափանցիկ կանոններ կուսակցությունների ֆինանսավորման վերաբերյալ,

Դատաիրավական համակարգի բարեփոխումներ.

- շարունակել բարելավել դատավորների, դատախազների և դատաիրավական համակարգի պաշտոնյաների, Արդարադատության նախարարության աշխատակազմի, ոստիկանության և ազատազրկման վայրերի աշխատակիցների վերապատրաստումը հատկապես մարդու իրավունքների հարցերի և միջազգային դատաիրավական համագործակցության բնագավառներում,
- հիմնել դատավորների շարունակական վերապատրաստման արդյունավետ համակարգ,
- ստեղծել դատավորների թեկնածուների պատրաստման դպրոց և դատական համակարգը համալրել որակյալ մասնագետներով,
- բարձրացնել դատական ակտերի կանխատեսելիության և թափանցիկության մակարդակը, մասնավորապես դատական ակտերի հրապարակման արդյունավետ համակարգի ստեղծման միջոցով,
- խորացնել դատախազների, վարչարարների, արդարադատության նախարարության պաշտոնյաների, ոստիկանների և կալանավայրերի աշխատակիցների

վերապատրաստումը, մասնավորապես մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում,
- ներդնել դատական վարչարարության ժամանակակից համակարգ,
- պատշաճ մակարդակի հասցնել դատարանների բյուջետային ֆինանսավորումը,
- բարձրացնել դատական ակտերի կատարման արդյունավետությունը, նախատեսել այդ ակտերի հարկադիր կատարումն ապահովող այլընտրանքային մարմիններ (ծառայություններ):

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ամրապնդում.

- նպաստել քաղաքացիական հասարակության զարգացմանը,
- ապահովել ՄԱԿ-ի՝ Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման մասին կոնվենցիայի լրացուցիչ արձանագրության վավերացումը և իրականացումը,
- շարունակել ջանքեր գործադրել արհեստակցական միությունների իրավունքների և առանցքային աշխատանքային չափանիշների ապահովման ուղղությամբ՝ հիմնվելով Եվրոպական չափանիշների և Միջազգային աշխատանքային կազմակերպության համապատասխան կոնվենցիաների վրա,
- ապահովել ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների հարգումը,
- շարունակել ջանքեր գործադրել հասարակությունում և տնտեսական կյանքում տղամարդկանց և կանանց հավասարությունն ապահովելու ուղղությամբ՝ «Կանանց կարգավիճակի բարելավման և հասարակությունում նրանց դերի բարձրացման» Ազգային ծրագրի իրականացման միջոցով:

Քաղաքացիական ծառայության բարեփոխում.

- Ստեղծել քաղաքացիական ծառայողների հավաքագրման միասնական ու թափանցիկ համակարգ և արժանիքների վրա հիմնված վարձատրության համակարգի հաստատման միջոցով խրախուսել հանրային միասնականության հաստատումը: Նպաստել քաղաքացիական ծառայության միասնական քաղաքականության վարման մեխանիզմների կատարելագործմանը և վարչական կարողությունների հզորացմանը,
- նպաստել քաղաքացիական ծառայողների արժանիքների վրա հիմնված վարձատրության համակարգի կատարելագործմանը, աշխատանքի կատարողականի գնահատման արդյունավետ համակարգի ներդրմանը,
- աջակցել քաղաքացիական ծառայության համակարգի գործունեության և ինստիտուտների (մրցույթի, ատեստավորման, քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերի և այլն) կատարելագործմանը և դրանք եվրոպական չափանիշներին ներդաշնակեցմանը,
- աջակցել քաղաքացիական ծառայողների կրթական և վերապատրաստման ծրագրերի (մասնավորապես՝ համակարգչային գիտելիքների, կառավարչական հմտությունների, օտար լեզուների, էթիկայի կանոնների և այլն) կատարելագործմանը՝ եվրոպական չափանիշներին համապատասխան,
- ստեղծել ԵՄ անդամ պետությունների և ՀՀ քաղաքացիական ծառայության համակարգի պատասխանատու մարմինների համագործակցության ցանց՝ օրենսդրության ներդաշնակեցման (և այլ համապատասխան գործունեության) և փորձին ու տեղեկատվության փոխանակման նպատակներով:

Կոռուպցիայի դեմ պայքար

- ապահովել կոռուպցիայի և կաշառակերության հետ կապված հանցանքների համապատասխան հետապնդումը և կատարողների դատապարտումը՝ բարելավելով վարչական որոշումների դեմ դատարաններ հայց ներկայացնելու ընթացակարգերը,

հաշվի առնելով 2005թ. մայիսին Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի ստորագրումից հետո վարչական դատարանների ստեղծումը 2006թ. ընթացքում,
- ապահովել Քրեական օրենսգրքի, մասնավորապես կաշառակերության և կոռուպցիային վերաբերող հանցանքների սահմանումների համապատասխանելիությունը միջազգային չափանիշներին, օրինակ՝ Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիային, Եվրոպայի Խորհրդի Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիային և Կոռուպցիայի մասին քաղաքացիական իրավունքի կոնվենցիային, ինչպես նաև Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության Միջազգային գործարար փոխգործակցություններում Օտարերկրյա պետական պաշտոնյաների կաշառակերության դեմ պայքարի մասին կոնվենցիային վավերացնելուց հետո՝ համապատասխան հետապնդում և դատապարտում ապահովելու նպատակով,
- իրականացնել և կիրառել հատուկ հակակոռուպցիոն միջոցառումներ օրինապահ մարմինների (ոստիկանություն, պետական սահմանային ծառայություն և դատահիրավական մարմիններ) շրջանակներում, ներառյալ դատախազների և դատավորների համար Էթիկայի օրենսգրքի մշակում և 2001 թ-ի սեպտեմբերի 19-ին Եվրոպայի Խորհրդի նախարարների կոմիտեի կողմից ընդունված Ոստիկանության էթիկայի եվրոպական օրենսգրքի կիրառում,
- ապահովել գույքի և եկամուտների վերաբերյալ պաշտոնյաների հայտարարագրերի արդյունավետ վերահսկողություն՝ փոփոխելով բարձրաստիճան պետական պաշտոնյաների կողմից ունեցվածքի և եկամուտների վերաբերյալ հայտարարագրերի մասին օրենքը և հաստատելով պատասխանատվության միջոցներ սխալ հայտարարագրերի համար,
- ապահովել առաջընթաց Եվրոպայի Խորհրդի՝ Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի (GRECO) առաջարկությունների իրականացման գործում,
- ապահովել բոլոր մակարդակների վարչական ակտերը դատարանում բողոքարկելու հնարավորություն, ներառյալ 2006թ. վարչական դատարաններ հիմնելու միջոցով,
- կոռուպցիան նվազեցնելու համար բարձրացնել դատավորների աշխատավարձը այնպիսի մակարդակի, ինչը կապահովի արժանապատիվ ծառայություն,
- ձեռնարկել դատավորների և դատախազների Վարքագծի կանոնների կիրառումն ապահովող ընթացակարգեր, այդ թվում դատավորների և դատախազների կողմից վարքագծի կանոնների պահպանման նկատմամբ արդյունավետ հսկողության համակարգերի ներդրում,

4.1.2 Համագործակցություն արտաքին և անվտանգության քաղաքականության բնագավառում, հակամարտությունների կանխարգելում և ճգնաժամերի կառավարում:

Ամրապնդել քաղաքական երկխոսությունը և համագործակցությունն արտաքին և անվտանգության խնդիրների շուրջ.

- շարունակել և զարգացնել ԵՄ-Հայաստան քաղաքական երկխոսությունը տարածաշրջանային և միջազգային խնդիրների, ներառյալ Եվրոպայի Խորհրդի, ԵԱՀԿ-ի և ՄԱԿ-ի շրջանակներում, ինչպես նաև Եվրոպական անվտանգության ռազմավարության իրականացման շուրջ,
- զարգացնել համագործակցությունը ԵՄ կողմից հաստատված պատժամիջոցների շուրջ, ներառյալ զենքերի էմբարգոն,
- զարգացնել խորացված քաղաքական երկխոսություն և տեղեկատվության փոխանակում Ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականության շուրջ, ներառյալ՝ Եվրոպական անվտանգության և պաշտպանության քաղաքականությունը,
- Եվրոպական Միությունը կարող է ընտրովիության հիմունքներով հրավիրել Հայաստանին միանալ տարածաշրջանային և միջազգային հարցերի շուրջ ԵՄ-ի ունեցած դիրքորոշումներին,
- նախաձեռնել Միջազգային քրեական դատարանի կանոնադրությանը միանալու գործընթաց,

- կատարել անհրաժեշտ օրենսդրական և սահմանադրական փոփոխություններ՝ դրա իրականացման համար,
- պայքարել միջազգային հանցագործության դեմ՝ միջազգային իրավունքի նորմերին համապատասխան, պատշաճ ուշադրություն դարձնելով Հռոմի կանոնադրության ամբողջականության պահպանմանը:

Զարգացնել հետագա համագործակցությունն ընդհանուր անվտանգության սպառնալիքներին, այդ թվում զանգվածային ոչնչացման զենքերի չտարածմանը և զենքի ապօրինի արտահանմանն արձագանքելու գործում.

- համագործակցել զանգվածային ոչնչացման զենքերի, դրանց առաքման միջոցների և բալիստիկ հրթիռների չտարածման գործում, այդ թվում ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1540/04 բանաձևի կիրառման միջոցով, ապահովելով լիակատար համապատասխանելիությունն առկա միջազգային պարտավորություններին և դրանց ազգային կիրառումը, ինչպես նաև խրախուսելով միացումը այլ համապատասխան միջազգային գործիքներին և արտահանման վերահսկման ռեժիմներին և ապահովելով դրանց կիրառումը,
- Այս համատեքստում շարունակել գոյություն ունեցող երկխոսությունը չտարածման համատեղ քաղաքականության շուրջ՝ խորացնելով առկա համագործակցությունը մեր հետազոտողների միջև, որոնք աջակցում են զանգվածային ոչնչացման զենքերի գծով նախկին գիտնականներին և ինժեներներին Միջազգային գիտական և տեխնոլոգիական կենտրոնի (ISTC) շրջանակներում վերուղղորդել իրենց տաղանդը դեպի քաղաքացիական և կայուն գործունեություն,
- զարգացնել հետագա համագործակցությունը զանգվածային ոչնչացման զենքերի արտադրման մեջ օգտագործվող նյութերի ապօրինի առքուվաճառքի կանխարգելման և դրա դեմ պայքարի գործում,
- համագործակցել արդյունավետ ազգային արտահանման վերահսկման համակարգի մշակման գործում՝ վերահսկելով զանգվածային ոչնչացման զենքերի հետ կապված ապրանքների արտահանումը և տարանցիկ փոխադրումը, ներառյալ երկակի նշանակության ապրանքների և տեխնոլոգիաների վերջնակետի վերահսկումը, ինչպես նաև կիրառելով արդյունավետ պատժամիջոցներ արտահանման վերահսկման կանոնների խախտման դեպքում,
- բարելավել չտարածման բնագավառում ընդհանուր համակարգումը, ուսումնասիրել տարածաշրջանային անվտանգությանը սպառնացող զանգվածային ոչնչացման զենքի հետ կապված առանձնահատուկ վտանգները և դրանց արձագանքելու գործում համագործակցության շրջանակները,
- համագործակցել ԵԱՀԿ փոքր և թեթև զենքի վերաբերյալ Փաստաթղթի, ԵԱՀԿ սովորական սպառազինությունների կուտակումների վերաբերյալ Փաստաթղթի, ինչպես նաև ԵԱՀԿ փոքր և թեթև զենքի հետ կապված լավագույն փորձի ուղեցույցի դրույթների կիրառման գործում,
- բարելավել ազգային օրենսդրությունը, այն համապատասխանեցնելով ԵՄ զենքի արտահանման էթիկայի օրենսգրքին,
- միանալ 1997թ-ի Հակահետևակային ականների օգտագործման, կուտակման, արտադրման, փոխանցման արգելման և դրանց ոչնչացման մասին Օտտավայի կոնվենցիային՝ երբ որ թույլ կտան պայմանները:

Զարգացնել ջանքերը և համագործակցությունը ահաբեկչության դեմ պայքարում.

- ամրապնդել ԵՄ-Հայաստան համագործակցությունն ահաբեկչության դեմ պայքարի և դրա կանխարգելման գործում,
- համագործակցել ահաբեկչության դեմ միջազգային պայքարի գործում ՄԱԿ-ի դերի ուժեղացման ուղղությամբ, այդ թվում կիրառելով ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1373/01, 1267/99 և 1566/04 և 1624/05 բանաձևերը, և Ահաբեկչության ֆինանսավորման

դեմ պայքարի ՄԱԿ-ի կոնվենցիան՝ ՄԱԿ-ի բոլոր համապատասխան կոնվենցիաների վավերացման և կիրառման միջոցով,
- աշխատել ԵՄ անդամ պետությունների և Հայաստանի համապատասխան դատաիրավական և օրինապահ մարմինների միջև տեղեկատվության փոխանակման համակարգի ստեղծման ուղղությամբ,
- կիրառել ահաբեկչության ֆինանսավորման վերաբերյալ Ահաբեկչության ֆինանսավորման մասին շրջանակային համաձայնագրում ուրվագծված չափանիշները,
- ապահովել մարդու իրավունքների հարգումն ահաբեկչության դեմ պայքարի գործում:

4.1.3. Տարածաշրջանային համագործակցություն

Մասնակցություն տարածաշրջանային համագործակցության նախաձեռնություններում.

- խորացնել Հարավային Կովկասում համագործակցությունը և ուրվագծել նոր բնագավառներ, այդ թվում ԵՄ կողմից ֆինանսավորվող աջակցության նախաձեռնությունների միջոցով, որոնք մանրամասն ներկայացված են տվյալ Գործողությունների ծրագրի համապատասխան մասերում. օր. բնապահպանություն, ջրային ռեսուրսների կառավարում, էներգետիկա, տրանսպորտ, կրթություն, սահմանների կառավարում, ինչպես նաև խորհրդարանական համագործակցություն,
- զարգացնել համագործակցությունը Հարավային Կովկասում քաղաքացիական արտակարգ իրավիճակների կառավարման, ինչպես նաև սեյսմիկ պաշտպանության տարբեր բնագավառներում՝ փորձի և տեղեկատվության փոխանակման նպատակով,
- շարունակել մասնակցել Հարավային Կովկասի խորհրդարանական նախաձեռնությանը, նպատակ ունենալով ձևավորել լիարժեք Հարավկովկասյան խորհրդարանական գործընթաց,
- խրախուսել և աջակցել բոլոր մակարդակներով մարդկային շփումները:
- ուսումնասիրել Հարավային Կովկասում «Եվրոռեգիոն» համագործակցության մոդելի կիրառման հնարավորությունը:

4.2 Նպաստել Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորմանը

Գործադրել շարունակական ջանքեր Լեռնային Ղարաբաղի շուրջ հակամարտության խաղաղ կարգավորման ուղղությամբ.
- ավելացնել քաղաքական աջակցությունը ԵԱՀԿ Մինսկի խմբին՝ միջազգային նորմերի և սկզբունքների, ներառյալ ժողովուրդների ինքնորոշման սկզբունքի հիման վրա հակամարտության կարգավորման ուղղությամբ տարվող աշխատանքներում,
- ուսումնասիրել ԵՄ աջակցության ցուցաբերման հնարավորությունները մարդասիրական և ականազերծման նախաձեռնություններին,
- աջակցել փախստականներին և ներքին տեղահանված անձանց,
- աջակցել քաղաքացիական հասարակության ակտիվ ներգրավմանը,
- հակամարտությունների կարգավորմանն աջակցելու համար Հարավային Կովկասում ԵՄ հատուկ ներկայացուցչի միջոցով ուժեղացնել համագործակցությունը այս և այլ հարցերում:

4.3 Տնտեսական և սոցիալական բարեփոխումներ, աղքատության նվազեցում և կայուն զարգացում

Էլ ավելի ընդլայնել տնտեսական զարգացումը.
- շարունակել բարեփոխումները պետական ֆինանսների կառավարման ոլորտում, որը կներառի ֆիսկալ տեղեկատվության որակի բարելավումը և պետական ներդրումային նախագծի նախապատրաստումը, ինչը կբարելավի կապիտալ ծախսերի ռազմավարական ծրագրավորումը,

- շարունակել պետական սեկտորի արդիականացումը՝ նպատակ ունենալով բոլորի համար ավելի մատչելի դարձնել հիմնական ծառայությունները:

Հետագա առաջընթաց աղքատության կրճատման գործում.

- ներդնել աշխատատեղերի ստեղծման և աղքատության կրճատման արդյունավետ միջոցներ, որոնք նպատակաուղղված կլինեն էականորեն կրճատելու աղքատության շեմից ցածր եկամուտներ ունեցող մարդկանց թիվը և բարձրացնելու սոցիալական հավասարության աստիճանը, ներառելով բոլորի համար մատչելի կրթական, առողջապահական և այլ սոցիալական ծառայությունների կայուն համակարգերի ներդրումը
- ԱՀՌՇ-ի վերաբերյալ իրազեկության բարձրացում տեղական ինքնակառավարման մարմինների, գործարար համայնքի, Ազգային ժողովի և այլ շահագրգիռ դերակատարների շրջանակներում,
- ներդնել կայուն կենսաթոշակային համակարգ հետևելով «եռասյուն մոտեցմանը»,
- բարելավել հատկապես ամենախոցելի խմբերի բարեկեցությունը:

Խթանել գյուղատնտեսական զարգացումը և արտադրությունը.

-շարունակել գյուղատնտեսության ոլորտի բարեփոխումների ռազմավարության իրականացումը, ապահովելով կառուցվածքային, ինստիտուցիոնալ, իրավական և վարչական անհրաժեշտ աջակցություն, ինչը, ի թիվս այլոց, կնվազեցնի աղքատությունը, կխթանի գյուղի զարգացումը և որակյալ արտադրությունը (տեղական արտադրանքներ, օրգանական արտադրանքներ, աշխարհագրական ցուցիչներ և այլն), ինչպես նաև գործունեության դիվերսիֆիկացմանը և արտահանման շուկաներ մուտքի հեշտացմանը,

- սահմանել և մշակել միջոցառումներ, որոնք վարկային աղբյուրները կդարձնեն ավելի մատչելի, ինչն էլ կխթանի մասնավոր ներդրումները գյուղատնտեսության ոլորտում:
- մշակել և ներդնել ԱՀԿ-ի կանոններին համապատասխան գյուղատնտեսության աջակցության համակարգ և փոխարինել ավելացված արժեքի հարկի մասով գործող հարկային արտոնությունների համակարգը,
- զարգացնել անտառտնտեսությունը (անտառների կառավարում, պաշտպանություն, պահպանում, վերականգնում, անտառային ռեսուրսների հավասարակշռված օգտագործում):

Բարելավել շուկայական տնտեսության գործունեության մեխանիզմները և կառուցվածքային բարեփոխումների միջոցով խթանել տնտեսական աճը.

-ամրապնդել գործարար միջավայրը և ԱՀՌՇ գործընթացում զարգացնել ֆինանսական միջնորդությունը, այդ թվում մասնավոր հատվածի հետ խորհրդակցությամբ մշակված գործողությունների ծրագրերի միջոցով:

Կայուն զարգացման խթանում.

- մշակել Կայուն զարգացման ազգային ռազմավարությունը ,
- ստեղծել վարչական կառույցներ և ընթացակարգեր՝ ապահովելու համար կայուն զարգացման ռազմավարական ծրագրավորումը և շահագրգիռ մարմինների գործունեության համակարգումը,
- քայլեր ձեռնարկել բարելավելու բնապահպանական խնդիրների ինտեգրացումը քաղաքականության այլ ոլորտներում:

4.4 Առևտրին առնչվող հարցեր, շուկայական և կարգավորող դաշտի բարեփոխումներ

4.4.1 Ապրանքների տեղաշարժ

Առևտրային հարաբերություններ

Բարելավել առևտրային հարաբերությունները և ապրանքների տեղաշարժը.
- խթանել ԵՄ-Հայաստան երկկողմ առևտուրը՝ ապահովելով ԳՀՀ-ում ամրագրված Հայաստանի բոլոր պարտավորությունների լիարժեք կատարումը
- վերահսկել համապատասխանելիությունը ԱՀԿ-ի կանոններին՝ ԱՀԿ գործող կանոնների և ընթացակարգերի շրջանակներում,
- խթանել աշխատակիցների վերապատրաստումը և կարողությունների ամրապնդումը միջազգային առևտրական հարաբերությունների ոլորտում,
- միջոցներ ձեռնարկել բարելավելու համար Արտոնությունների ընդհանուր համակարգից (GSP) օգուտները և այդպիսով բարելավել Հայաստանի արտահանումը,
- ԵՄ և Հայաստանը համատեղ կերպով կքննեն երկկողմ առևտրի հետագա ընդլայնման հնարավոր տարբերակները ներառյալ ԵՄ-ի և Հայաստանի միջև ազատ առևտրի համաձայնագրի կնքման հնարավորությունը: Այս համատեքստում, Հանձնաժողովը կնախաձեռնի նախապատրաստական ուսումնասիրություն, որը հաշվի կառնի նաև տարածաշրջանային առևտրային և տնտեսական ինտեգրացիան:

Մաքսային ոլորտ

- Շարունակել ներդաշնակեցնել և պարզեցնել մաքսային օրենսդրությունը, ներառելով մաքսային ոլորտի ենթաօրենսդրական դաշտը ,
- ամրապնդել մաքսային վերահսկողությունը չարտոնագրված կամ կեղծ ապրանքների ներմուծման և արտահանման հարցում,
- ուժեղացնել համագործակցությունը մաքսային և այլ, ներառյալ սահմանակետերում տեղակայված գործակալությունների միջև,
- զարգացնել ԵՄ-Հայաստան համագործակցությունը ընտրողականության վրա հիմնված մաքսային զննման ոլորտում, ինչը կապահովի ներմուծված, արտահանված և տարանցիկ ապրանքների ապահովությունը և անվտանգությունը,
- զարգացնել ԵՄ-Հայաստան համագործակցությունը սահմանելու ներմուծողների, արտահանողներ և փոխադրողներ վավերականացման չափանիշները հիմնված ԵՄ լավագույն փորձի վրա:

Չափանիշներ, տեխնիկական կանոններ և համապատասխանելիության գնահատման ընթացակարգեր (ԵՄ-ի ներդաշնակեցված ոլորտներ)

Անցում դեպի չափանիշների, տեխնիկական կանոնների և համապատասխանելիության գնահատման ընթացակարգերի (ԵՄ-ի ներդաշնակեցված ոլորտներ) ԵՄ և միջազգային օրենսդրական ու վարչական պրակտիկային.
- արտադրողների և արտահանողների հետ խորհրդակցությունների միջոցով համատեղ որոշել առաջնային արդյունաբերական ոլորտները՝ հնարավոր օրենսդրական մոտարկման համար (հնարավորությամբ, որ բոլոր պահանջվող պայմանների ընդունման և իրականացման դեպքում դրանք կներառվեն Արդյունաբերական ապրանքների համապատասխանելիության գնահատման և ճանաչման մասին համաձայնագրում, ACAA): Շարունակել ջանքերը ԵՄ համապատասխան չափանիշները հայերեն թարգմանելու գործընթացն ավարտին հասցնելու համար,
- առաջնային ոլորտներում ներդաշնակեցնել անհրաժեշտ օրենսդրությունը ԵՄ տեխնիկական օրենսդրությանը,

- ամրապնդել ստանդարտացման, հավատարմագրման, համապատասխանելիության գնահատման, չափագիտության և շուկայի վերահսկողության պատասխանատու ինստիտուտները, հնարավորինս ինտեգրել դրանք ԵՄ և միջազգային կառույցներին,
- պարզեցնել արդյունաբերական ապրանքների համապատասխանելիության գնահատման ընթացակարգերը՝ նպատակ ունենալով խուսափել ցածր ռիսկային ապրանքների հարկադրական սերտիֆիկացումից և կրկնվող փորձաքննությունից,
- մշակել շուկայի վերահսկման կարողություններ՝ հիմնված ԵՄ անդամ պետությունների լավագույն փորձի վրա,
- ուսումնասիրել չափանիշների վերաբերյալ ԵՄ տեղեկատվական բազայից անվճար օգտվելու հնարավորությունները:

<u>Սահմանափակումներ և ռացիոնալիզացված վարչարարություն (ԵՄ չներդաշնակեցված ոլորտներ)</u>
- ներկրված ապրանքների նկատմամբ խտրականությունը և սահմանափակումները հայտնաբերելու և աստիճանաբար վերացնելու նպատակով վերլուծել օրենսդրությունը և վարչական կանոնակարգերը,
- տեղեկատվության հոսքը և տնտեսվարող սուբյեկտների հետ համագործակցությունը հեշտացնելու համար նշանակել կենտրոնական համակարգող:

<u>Սանիտարական և ֆիտոսանիտարական հարցեր</u>

Բարելավել սննդի անվտանգությունը սպառողների համար և սանիտարական ու ֆիտոսանիտարական ոլորտների բարեփոխումների և արդիականացման միջոցով հեշտացնել առևտուրը.
- շարունակել աշխատանքները սանիտարական ու ֆիտոսանիտարական միջոցառումների կիրառման մասով ԱՀԿ համաձայնագրի իրականացման ուղղությամբ և ակտիվորեն մասնակցել համապատասխան միջազգային մարմիններում (Կենդանիների առողջապահության համաշխարհային կազմակերպություն, OIE, Codex Alimentarius),
- տեղեկատվություն փոխանակել և ուսումնասիրել ԵՄ-ում կիրառվող փորձի հետ համապատասխանության հնարավոր սեկտորները՝ սանիտարական ու ֆիտոսանիտարական ոլորտում (օրինակ՝ քաղաքականություն, օրենսդրություն, ինստիտուտների, ներառյալ լաբորատորիաների ամրապնդում, փորձի կիրառում),
- միջնաժամկետ հեռանկարով՝ մշակել առաջնային միջոցառումների ցանկ, որով պետք է իրականացվի աստիճանական համապատասխանեցումը ԵՄ սննդի անվտանգության ընդհանուր սկզբունքների և պահանջների հետ (178/2002/ԵՀ որոշումը, կենդանիների և բույսերի նույնականացման և վերահսկելիության համակարգերը, հիգիենան սննդի արտադրության մեջ), այս ոլորտում սկսել մոտարկել Հայաստանի օրենսդրությունը ԵՄ չափանիշներին,
- կիրառել կենդանիների առողջությանը և կենդանածին ապրանքների արտադրությանն առնչվող ԵՄ պահանջները (օր. «Ընդհանուր ուղեցույց երրորդ երկրների իշխանությունների համար այն ընթացակարգերի մասին, որոնց պետք է հետևել, երբ ներմուծում են կենդանիներ կամ կենդանածին ապրանքներ ԵՄ», ԳՏ, SANCO/FVO, 2003թ. հոկտեմբեր),
- աշխատանքներ տանել ԵՄ Սննդի և սնուցման արագ արձագանքման համակարգի հետ փոխկապակցվածություն ապահովելու ուղղությամբ:

4.4.2 Ընկերություններ հիմնելու իրավունքը, ընկերությունների մասին օրենսդրությունը և ծառայությունները

<u>Ընկերություններ հիմնելու իրավունքը և ընկերությունների մասին օրենսդրությունը</u>

ԳՀՀ-ի IV մասի, երկրորդ գլխի (ընկերությունների հիմնադրման և գործունեության վրա ազդող պայմաններ) և VI մասի հոդված 45 (ներդրումների խթանում և պաշտպանություն) լրիվ իրականացում.

- ապահովել այն սկզբունքի կիրառումը, որով ընկերությունների հիմնման պայմաններն ավելի խիստ չպետք է լինեն, քան ԳՀՀ-ի կնքումից առաջ էին,
- ուժեղացնել Հայկական զարգացման գործակալության վարչական կարողությունները և ապահովել դրա արդյունավետ գործունեությունը,
- մոտարկել Ընկերությունների մասին օրենքի, հաշվապահության և աուդիտի հիմնական սկզբունքները ԵՄ և միջազգային չափանիշներին և ապահովել դրանց արդյունավետ իրականացումը,
- բարելավել Ընկերությունների մասին օրենքի և դրան առնչվող ներդրումային միջավայրի վերահսկողության համար պատասխանատու վարչական և դատիրավական մարմինների կայունությունը և կանխատեսելիությունը,
- ապահովել ձեռնարկությունների պետական գրանցման արդյունավետ իրականացումը և պետական պաշտոնական տեղեկագրում հրապարակել որոշակի տեղեկատվություն, մասնավորապես՝ ընկերությունների մասին կազմակերպչական և ֆինանսական մանրամասնությունները, ԵՄ-ում կիրառվող ընթացակարգերին համահունչ:
- արդիականացնել կորպորատիվ կառավարման մասին օրենսդրությունը և ապահովել դրա արդյունավետ իրականացումը,
- զարգացնել կորպորատիվ բացահայտման և աուդիտի չափանիշները,
- բարելավել սնանկության մասին օրենսդրությունը և ապահովել դրա արդյունավետ կիրառումը, մասնավորապես գործընթացի թափանցիկության բարձրացման միջոցով:

<u>Ծառայություններ</u>

Սահմանափակումների աստիճանական վերացումից հետո թույլ տալ որոշակի ոլորտներում ԵՄ-ի և Հայաստանի միջև ծառայությունների հարաճուն մատուցում, համաձայն ԳՀՀ-ի IV մասի, III գլխի պարտավորությունների (անդրսահմանային ծառայությունների մատուցում).

- ծառայությունների մատուցմանն առնչվող արգելքները վերհանելու և դրանք վերացնելու նպատակով հիմնովին վերանայել ՀՀ ազգային օրենսդրությունը,
- հիմնել համապատասխան վարչական կառույցներ և ապահովել դրանց արդյունավետ իրականացումը, ներառյալ կենտրոնական համակարգող մարմինը, որը պետք է հեշտացնի ծառայությունների մատուցումը:

<u>Ֆինանսական ծառայություններ</u>

- Կատարել ԱՄՀ-ի Ֆինանսական սեկտորի գնահատման ծրագրի (FSAP) առաջարկությունները, թվագրված մայիսի 25, 2005թ.,
- զարգացնել ֆինանսական ծառայությունների և վերահսկողության ողջամիտ կարգավորիչ դաշտ՝ ԵՄ-ում գոյություն ունեցող օրինակին համապատասխան,
- միջազգային ճանաչված չափանիշներին համապատասխան հիմնել անկախ վերահսկիչ մարմին և ապահովել դրա արդյունավետ գործունեությունը:
- զարգացնել ապահովագրական շուկան եվրոպական չափանիշներին համապատասխան,

4.4.3 Կապիտալի տեղաշարժ և ընթացիկ վճարներ

Ապահովել ԳՀՀ-ի V մասի պարտավորությունների լրիվ իրականացումը (ընթացիկ վճարներ և կապիտալ).

- ապահովել ընկերություններում արված ուղիղ և ըստ Ընկերությունների հիմնման մասին հոդվածների (ԳՀՀ-ի IV մասի II գլուխ) այլ ներդրումներին առնչվող կապիտալի ազատ տեղաշարժը,
- ապահովել օտարերկրյա վերոհիշյալ ներդրումների պաշտպանությունը և օգուտների ու կապիտալի լիկվիդացիան և ռեպատրիացիան,

4.4.4 Անձանց, ներառյալ աշխատավորների, տեղաշարժը

ԳՀՀ-ի 20-րդ հոդվածի պարտավորությունների (աշխատանքի պայմաններ) լրիվ իրականացում.
- ապահովել այն սկզբունքի կիրառումը, որով ընկերությունների հիմնման պայմաններն ավելի խիստ չպետք է լինեն, քան ԳՀՀ-ի կնքումից առաջ էին՝ վերացնելով քաղաքացիության վրա հիմնված ամեն տեսակ խտրական միջոցառումները, որոնք ազդում են գաղթական աշխատողների վրա, մասնավորապես՝ խոսքը վերաբերում է աշխատանքային պայմաններին, վարձատրմանը և արձակուրդներին:

4.4.5 Այլ առանցքային ոլորտներ

Հարկային ոլորտ
- Շարունակել իրականացնել ՄԱՀ-ի առաջարկները, ներառյալ միասնական հարկային օրենսգրքի ընդունումը,
- զարգացնել Հայաստանի հարկային համակարգը ԵՄ-ի և միջազգային ընդհանուր սկզբունքներին համահունչ:
- սկսել երկխոսություն ԵՄ Բիզնեսի հարկման էթիկայի օրենսգրքի սկզբունքների վերաբերյալ՝ նպատակ ունենալով Հայաստանի համար ապահովել արդար պայմաններ՝ ԵՄ միասնական շուկայում նրա ինտեգրացման ընթացքում:

Մրցակցային քաղաքականություն

Համապատասխանեցում մրցակցության մասին ԵՄ սկզբունքներին՝ ԳՀՀ-ի V մասի 43-րդ հոդվածի համաձայն.
- ուսումնասիրել լիակատար թափանցիկության հաստատման հնարավորությունը Հայաստանում տրվող պետական օգնության ոլորտում, մասնավորապես՝ կազմել (ա) օգնություն տրամադրողների ամբողջական ցուցակը, (բ) ստեղծել համապետական մեխանիզմներ Հայաստանում պետական օգնության մասին տեղեկատվությունը մեկ տեղում կենտրոնացնելու համար՝ նպատակ ունենալով կազմել տարեկան հաշվետվություններ օգնության ծավալի, տեսակի և շահառուների մասին:

Հակամենաշնորհային քաղաքականություն և պետական օգնության վերահսկում.
- ընդլայնել Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի վարչական կարողությունները և անկախությունը,
- մրցակցության գործակալության համար ապահովել պատշաճ իրավական լիազորություններ, ներառյալ տեղում ստուգումներ անցկացնելու իրավունքը:

Մտավոր և արդյունաբերական սեփականության իրավունք
- Ապահովել մտավոր սեփականության իրավունքի վերաբերյալ օրենսդրության լրիվ համապատասխանությունը ԳՀՀ-ի պարտավորություններին ու TRIPS պահանջներին, ինչպես նաև ապահովել դրա արդյունավետ իրականացումը,
- ապահովել դատաիրավական համակարգի պատշաճ գործունեությունը, որպեսզի երաշխավորվի արդարադատության հասանելիությունը հեղինակային իրավունք ունեցողների համար, ինչպես նաև ապահովվի պատժամիջոցների նշանակումը և արդյունավետ կիրառումը,

- կոնսոլիդացնել համապատասխան ինստիտուցիոնալ կառույցները, ինչպես նաև արդյունաբերական իրավունքների, հեղինակային իրավունքի պաշտպանության և կոլեկտիվ միությունների գրասենյակները: Ընդլայնել համագործակցությունն երրորդ երկրների իշխանությունների և արդյունաբերական միավորումների հետ,
- ավելացնել օրենքի կիրառմանը, այդ թվում՝ դատաիրավական համակարգին, տրամադրվող ռեսուրսները,
- բարելավել Գործընկերության և համագործակցության համաձայնագրով նախատեսված համապատասխան կոնվենցիաների կիրառումը,
- Զարգացնել Հայաստանի և ԵՄ օրինապահ մարմինների միջև համագործակցությունը մտավոր սեփականության ոլորտում կատարվող հանցագործությունների դեմ պայքարում:

Պետական գնումներ

Մշակել կողմերի միջև համաձայնագրերի բաց և մրցունակ բաշխման համար պայմաններ, մասնավորապես՝ տենդերների մասին հայտարարությունների միջոցով, Գործընկերության և համագործակցության համաձայնագրի 48 հոդվածի համաձայն և շարունակել պետական գնումների համակարգի բարեփոխումները

- ապահովել պետական գնումների վերաբերյալ օրենքի կիրառումը,
- ապահովել գնումների համակարգի համապատասխանությունը ԵՄ գնումների մասին օրենսդրության և սկզբունքների հետ, մասնավորապես՝ թափանցիկության, տեղեկատվության տրամադրման, իրավական օգնության մատչելիության, պատվիրատուների և գործարարների շրջանակներում իրազեկման և վերապատրաստման միջոցով, ինչպես նաև բացառությունների սահմանափակ կիրառում,
- վերանայել գործող ընթացակարգերը և բարելավել Պետական գնումների գործակալության վարչական կարողությունները
- ապահովել Հայաստանում էլեկտրոնային գնումների համակարգի ներդրման ռազմավարության իրականացումը,
- միանալ Առևտրի համաշխարհային կազմակերպության Պետական գնումների մասին համաձայնագրին:

Վիճակագրություն

ԵՄ ստանդարտներին համապատասխանող վիճակագրական մեթոդների ընդունում և Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության արդիականացում.

- մշակել և իրականացնել կարճաժամկետ և միջնաժամկետ ռազմավարություն վիճակագրական համապատասխան ոլորտներում եվրոպական ստանդարտներին համապատասխանելու նպատակով, հիմնվելով ԵՄ փորձագետների կողմից Հայաստանի վիճակագրական համակարգի ընդհանուր գնահատման վրա,
- բարելավել գործարար ռեգիստրի որակը և ծածկույթը,
- նախապատրաստել և իրականացնել գյուղատնտեսության համատարած հաշվառում Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության ուղեցույցների համաձայն,

Պետական ներքին ֆինանսական վերահսկողություն և հարակից խնդիրներ

Պետական ֆինանսների պատշաճ կառավարում և վերահսկում.
- խրախուսել պատշաճ վարչական կարողության զարգացումը՝ ազգային և միջազգային ֆինանսական միջոցների վրա բացասաբար ազդող խաբեությունները և այլ անօրինականությունները կանխելու և դրանց դեմ արդյունավետ պայքարելու համար, այդ թվում բոլոր համապատասխան ազգային միավորները ներառող արդյունավետ կառույցների ստեղծումը,

- բարելավել պետական ֆինանսների կառավարումը ու թափանցիկությունը, մասնավորապես երկրորդ սերնդի Գանձապահության հաշիվների և պետական սեկտորի հաշվապահության բարեփոխումների իրականացման և պետական ֆինանսների կառավարման, ներառյալ պետական ոչ առևտրային կազմակերպությունները, ամբողջական տեղեկատվական համակարգի մշակման և ներդրման միջոցով:
- ապահովել համապատասխան ԵՄ ինստիտուտների և մարմինների հետ արդյունավետ համագործակցությունը՝ ԵՄ ֆինանսական միջոցների կառավարմանը և վերահսկմանն առնչվող դեպքերում տեղում ստուգումներ կատարելու և տեսչության միջոցով:

Պետական ներքին ֆինանսական վերահսկողություն.

- ԱՄՀ-ի և Համաշխարհային բանկի հետ սերտ համագործակցությամբ ողջ պետական սեկտորի համար ներդնել պետական ներքին ֆինանսական վերահսկողության համակարգ, որը հիմնված կլինի մենեջերական հաշվետվելիության և գործնականում անկախ ներքին աուդիտի սկզբունքների վրա՝ միջազգայնորեն համաձայնեցված չափանիշների (IFAC, IIA, INTOSAI) և մեթոդաբանություններին համահունչ:
- ապահովել Հայաստանի կառավարության կողմից ընդունված ներքին աուդիտի համակարգի բարեփոխումների ծրագրի իրականացումը, որը ներառում է Հայաստանի պետական ոլորտում ներքին աուդիտի զարգացումը՝ միջազգային ստանդարտներին համապատասխան (IIA, INTOSAI, IFAC):

Արտաքին աուդիտ

- Շարունակել ամրապնդել Վերստուգիչ պալատը (անկախություն, կազմակերպչական կարողություն, աուդիտ, մեթոդաբանություն, ֆինանսական և մարդկային ռեսուրսներ) որպես Հայաստանում աուդիտի բարձրագույն ատյան՝ արտաքին աուդիտի միջազգայնորեն ընդունված և ԵՄ լավագույն փորձի չափանիշներին համապատասխան (INTOSAI չափանիշներ):

Ձեռնարկությունների ոլորտում քաղաքականություն

Զարգացնել և ամրապնդել փոքր և միջին ձեռնարկությունները և դրանց միավորումները, ինչպես նաև Եվրոպական համայնքում և Հայաստանում գործող փոքր և միջին ձեռնարկությունների միջև համագործակցությունը՝ Գործընկերության և համագործակցության համաձայնագրի 62-րդ հոդվածի համաձայն.

- աջակցել Հայաստանի ՓՄՁ զարգացմանը՝ համապատասխան օրենսդրական շրջանակ և ենթակառուցվածք ստեղծելու միջոցով, ինչպես նախատեսված է Գործընկերության և համագործակցության համաձայնագրի 62-րդ հոդվածով,
- խթանել տեղեկատվության և լավագույն փորձի փոխանակումը ԵՄ ձեռնարկությունների և արդյունաբերական քաղաքականությունների վերաբերյալ և Հայաստանը մասնակից դարձնել ԵՄ նախաձեռնություններին՝ մրցակցության խրախուսման նպատակով (օր. տեղեկատվության փոխանակում, ցանցերում և ուսումնասիրություններում մասնակցություն, դասընթացների կազմակերպում),
- ուսումնասիրել ձեռնարկությունների և արդյունաբերական քաղաքականության շուրջ երկխոսություն սկսելու նպատակահարմարությունը և հնարավոր տարբերակները,

4.5 Արդարադատության, ազատության և անվտանգության բնագավառում համագործակցություն

Ամրապնդել երկխոսությունը և համագործակցությունն արդարադատության, ազատության և անվտանգության բնագավառում:

4.5.1. Համագործակցություն սահմանների կառավարման գործում

Ակտիվացնել անդրսահմանային համագործակցությունը Հայաստանի, ԵՄ անդամ պետությունների և հարևան երկրների միջև.

- նախատեսել Հարավային Կովկասում BOMCA տիպի տեխնիկական աջակցության ծրագիր՝ համապատասխան օրինապահ մարմինների միջև տարածաշրջանային համագործակցություն զարգացնելու նպատակով (պետական սահմանային ծառայություն, ոստիկանություն, միգրացիայի ծառայություն և մաքսային կոմիտե):

4.5.2 Միգրացիայի խնդիրներ (օրինական և անօրինական միգրացիա, ռեադմիսիա, վիզա, ապաստան)

Զարգացնել համագործակցություն միգրացիայի խնդիրների շուրջ.
- մշակել և սկսել կիրառել համապարփակ, ամբողջական և հավասարակշռված ազգային գործողությունների ծրագիր միգրացիայի և ապաստանի խնդիրների վերաբերյալ,
- օժանդակել աշխատանքային միգրացիայի կազմակերպման գործում,
- տեղեկատվության փոխանակում և հնարավոր համագործակցություն տարանցիկ միգրացիայի հարցերում,
- տվյալների էլեկտրոնային բազայի ստեղծում՝ միգրացիոն հոսքերը վերահսկելու համար,
- հնարավորինս օգտագործել ԵՀ առկա համայնքային ծրագրերը, ներառյալ AENEAS-ը և դրա հաջորդները, ապաստանին և միգրացիային առնչվող գործողությունները սատարելու նպատակով:

Ընդլայնված երկխոսություն միգրացիոն խնդիրների, այդ թվում անօրինական միգրացիայի կանխարգելման և վերահսկման, սեփական քաղաքացիների, ապատրիդների և երրորդ երկրների քաղաքացիների ռեադմիսիայի շուրջ.

- տեղեկատվության և լավագույն փորձի փոխանակում միգրացիային և ապաստանին առնչվող խնդիրների (մուտք երկիր, կեցություն, ինտեգրում, ժամանակավոր պաշտպանություն, EURODAC համակարգ, ապաստան հայցողների ընդունման պայմաններ, անօրինական միգրանտների կալանավորում) և անօրինական միգրացիայի վերաբերյալ,
- ռեադմիսիոն հարցերի շուրջ երկխոսություն նախաձեռնել ԵՄ-ի մակարդակով, ինչը կարող է հանգեցնել ԵՀ-Հայաստան ռեադմիսիայի համաձայնագրի կնքմանը. փորձի և փորձաքննության փոխանակում նմանատիպ համաձայնագրի գործնական հետևանքների վերաբերյալ: Մինչև ռեադմիսիայի մասին ԵՀ համաձայնագրի բանակցությունների ավարտը՝ ընդլայնել գործնական համագործակցությունը ԵՄ անդամ պետությունների հետ:
- զարգացնել համագործակցությունը միջազգային կազմակերպությունների ու ծագման, տրանզիտի և վերջնակետի հիմնական երկրների համապատասխան գործակալությունների հետ՝ միգրացիոն գործընթացները կառավարելու համար:
- վերադարձած/հայրենադարձած անձանց ռեինտեգրացիայի աջակցությանն ուղղված միջոցառումների մշակում և իրականացում:

Ձեռնարկել քայլեր փախստականների և ներքին տեղահանված անձանց պաշտպանության ազգային համակարգերի արդիականացման համար՝ միջազգային չափանիշների համաձայն, որը կլինի ինքնաբավարար և կառաջարկի ինտեգրացիայի հնարավորություն՝ չափանիշներին համապատասխանող անձանց համար.

- 1951թ. Ժնևի Կոնվենցիայի և 1967թ. Արձանագրության սկզբունքների կիրառում, ապաստանի և փախստականների վերաբերյալ ազգային օրենսդրության բարելավում՝ միջազգային և ԵՄ չափանիշներին համապատասխան,
- կիրառել ապաստանի հայցերի վերաբերյալ ստանդարտ հայեցակարգեր՝ միջազգային և ԵՄ չափանիշներին համապատասխան,
- ամրապնդել Տարածքային կառավարման նախարարության Միգրացիոն գործակալության վարչական կարողությունները,
- բարելավել փախստականների և ներքին տեղահանված անձանց պաշտպանությունը և ցուցաբերվող աջակցությունը, մասնավորապես՝ նրանց ինքնաբավարարությունը և ինտեգրումն ապահովելու համար (հավանաբար, կենտրոնանալով գյուղական շրջաններում գտնվող առավել խոցելի փախստականների և ժամանակավոր կացարաններում բնակվող անձանց վրա): Հնարավոր գործողությունները. ինքնազբաղվածության և փոքր բիզնեսի քաջալերում, ժամանակավոր կացարաններում գտնվող անձանց բնակարանային պայմանների բարելավում:

Անձանց տեղաշարժի հեշտացում.

- տեղեկատվության փոխանակում վիզաների վերաբերյալ,
- համագործակցել ճամփորդական փաստաթղթերի և վիզաների անվտանգությունը բարելավելու հարցում՝ միջազգային ստանդարտներին համապատասխան, ներառյալ կենսաչափական հատկանիշների ներդրում անձնագրերում,
- ԳՀՀ-ի գործող մեխանիզմների շրջանակներում երկխոսություն հաստատել միգրացիոն հարցերի շուրջ, ներառյալ անօրինական միգրացիայի կանխումը և դրա դեմ պայքարը, սեփական, երրորդ երկրի քաղաքացիների ու քաղաքացիություն չունեցող անձանց ռեադմիսիան և վիզային հարցերը:

4.5.3 *Պայքար կազմակերպված հանցագործության, թրաֆիկինգի, թմրամիջոցների փոխադրման և փողի լվացման դեմ*

Ավելացնել համագործակցությունը և ջանքերը կազմակերպված հանցավորության դեմ պայքարում.

- կիրառել տարազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի ՄԱԿ-ի կոնվենցիան ,
- միանալ Հրազենի, դրանց մասերի և բաղադրամասերի և զինամթերքի ապօրինի արտադրության և թրաֆիկինգի վերաբերյալ վերը նշված ՄԱԿ-ի Կոնվենցիայի արձանագրությանը,
- համագործակցել ԵՄ իրավապահ մարմինների և միջազգային կազմակերպությունների հետ քրեական նոր ասպարեզներում, այն է՝ տեղեկատվական և կոմունիկացիոն տեխնոլոգիաներին առնչվող հանցագործությունների, մասնավորապես, երեխաների պոռնոգրաֆիայի հարցում. ստեղծել կենտրոնակայան՝ գնահատելու ինտերնետում ապօրինի բովանդակության վերաբերյալ զեկույցները և ձեռնարկելու համապատասխան միջոցներ:

Ուժեղացնել պայքարը մարդկանց թրաֆիկինգի, հատկապես կանանց և երեխաների (ինչպես նաև ակտիվացնել գործողությունները նման թրաֆիկինգի զոհերին ինտեգրելու համար), և անօրինական միգրանտների մաքսանենգության դեմ.

- կիրառել 2004թ. հունվարին ընդունված Մարդկանց թրաֆիկինգը կանխելու ազգային գործողությունների ծրագիրը՝ տարազգային կազմակերպված հանցագործության դեմ պայքարի ՄԱԿ-ի կոնվենցիային և դրա՝ միգրանտների մաքսանենգության և անձանց

թրաֆիկինգի վերաբերյալ արձանագրություններին («Պալերմոյի արձանագրություններ») համապատասխան,
- կիրառել Մարդկանց թրաֆիկինգի դեմ պայքարի ԵԱՀԿ գործողությունների ծրագրով նախատեսված քայլերը (հաստատված է 2003թ. դեկտեմբերին Մաաստրիխտում, Գլուխներ III, IV, V) և ամրապնդել համագործակցությունը համապատասխան միջազգային կազմակերպությունների շրջանակներում (ԵԱՀԿ, ՄԱԿ),
- խթանել տեղեկատվության փոխանակումը Հայաստանի և ԵՄ անդամ պետությունների միջև, ինչպես նաև համագործակցությունը համապատասխան իրավապահ մարմինների միջև (ոստիկանություն, սահմանապահ ուժեր, մաքսային ծառայություններ և դատական կառույցներ) տարածաշրջանային մակարդակով,
- Մշակել զոհերի պաշտպանության, օգնության և ռեաբիլիտացիայի մեխանիզմներ:

Ամրապնդել պայքարը թմրանյութերի, ներառյալ հումքային հիմնական նյութերի տարատեսակների ապօրինի փոխադրման, ինչպես նաև թմրամոլության դեմ՝ թմրանյութերի օգտագործման կանխարգելման և թմրամոլների ռեաբիլիտացիայի միջոցով.
- շարունակել կիրառել 1988թ. Թմրանյութերի և հոգեմետիկ նյութերի ապօրինի փոխադրումների վերաբերյալ ՄԱԿ-ի կոնվենցիան,
- ամրապնդել ազգային օրենսդրությունը և մշակել հակաթմրանյութային ազգային ռազմավարություն, որը կանդրադառնա նաև թմրանյութերի պահանջարկին ու առաջարկին, ինչպես նաև կանխարգելման և թմրամոլների բուժման ծրագրերին, ուժեղացնել համապատասխան օրինապահ մարմինների կարողությունները,
- ակտիվացնել ռազմավարական և գործնական համագործակցությունը Սև և Կասպյան ծովերի ավազանների հարևան երկրների հետ՝ Աֆղանստանից առաքվող թմրանյութերի բռնագրավումն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով:

Ուժեղացնել համագործակցությունը և ջանքերը փողի լվացման դեմ պայքարում.
- ուժեղացնել համագործակցությունը Կենտրոնական բանկի, ֆինանսական ինստիտուտների, միջազգային ֆինանսական հաստատությունների՝ ԱՄՀ, ՀԲ, ՄՖԿ, ՎԶԵԲ, և իրավապահ մարմինների միջև՝ բարձրացնելու ֆինանսական ինստիտուտների և այլ համապատասխան մարմինների, ներառյալ խաղատները, իրազեկությունն իրենց պարտավորությունների և պատասխանատվության վերաբերյալ, որոնք բխում են փողերի լվացման դեմ նոր օրենսդրությունից, մասնավորապես նկատի ունենալով «ճանաչեք ձեր հաճախորդին» սկզբունքները,
- վավերացնել ու կիրառել Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, փնտրման, բռնագրավման և առգրավման կոնվենցիան, ինչպես նաև ահաբեկչության ֆինանսավորման վերաբերյալ 2005թ. Կոնվենցիան,
- ապահովել, որ փողերի լվացման դեմ պայքարի կանոնակարգերը կիրառվեն բարեգործական ոլորտում. փոխանակել տեղեկատվություն և փորձագիտություն այս կիրառումից ծագող հնարավոր խնդիրների վերաբերյալ,
- փոխանակել տեղեկություններ փողի լվացման դեմ պայքարի մասով գոյություն ունեցող եվրոպական կառույցների և Հայաստանում առկա համակարգերի վերաբերյալ,
- բարելավել ՀԿԲ-ի Ֆինանսական դիտարկումների կենտրոնի՝ կասկածելի գործարքների մասին միջգերատեսչական տվյալների բազան, այդ թվում նաև ծրագրային ապահովմամբ,
- խթանել փողի լվացման դեմ արդյունավետ պատժամիջոցների կիրառումը,
- ստեղծել ուսումնական ծրագրեր ֆինանսական հանցագործությունների հարցերով իրավապահ մարմինների աշխատակազմի, դատավորների, դատախազների և բոլոր այլ համապատասխան անձնակազմի համար,
- ուժեղացնել համագործակցությունը և խրախուսել տեղեկատվության փոխանակումն իրավապահ մարմինների միջև. ուժեղացնել համագործակցությունը Moneyval-ի, FATF-ի տիպի տարածաշրջանային մարմինների (հնարավոր է Eurasian group) հետ, ինչպես նաև

ԵՄ անդամ երկրների համապատասխան ծառայությունների և եվրոպական մակարդակով մասնագիտացված մարմինների հետ,
- արտասահմանյան ֆինանսական հետախուզության կառույցների հետ տեղեկատվության արդյունավետ փոխանակման նպատակով նախատեսել ՀԿԲ-ի Ֆինանսական դիտարկումների կենտրոնի անդամակցությունը «Էգմոնտ» խմբին:

4.5.4 Ոստիկանության և դատիրավական համակարգի համագործակցություն

Զարգացնել իրավապահ և դատական ոլորտում տարածաշրջանային և միջազգային համագործակցությունը.
- ամբողջությամբ կիրառել քրեական և քաղաքացիական իրավունքի վերաբերյալ համապատասխան միջազգային կոնվենցիաները, մասնավորապես՝
- միանալ և կիրառել Քրեական հարցերով փոխադարձ աջակցության վերաբերյալ եվրոպական կոնվենցիայի Երկրորդ արձանագրությունը,
- միանալ և կիրառել 1980թ. Երեխաների միջազգային առևանգման քաղաքացիական ասպեկտների վերաբերյալ Հաագայի կոնվենցիան,
- բարելավել միջգերատեսչական և միջազգային համագործակցությունը, մասնավորապես իրավապահ մարմինների համագործակցությունը Սև և Կասպյան ծովերի ավազանի հարևան երկրների հետ:

Զարգացնել համագործակցությունը Հայաստանի և ԵՄ անդամ երկրների դատական և իրավապահ մարմինների միջև.

- հաստատել համակարգողների ցանց ԵՄ անդամ երկրների դատական և իրավապահ մարմինների հետ՝ համագործակցությունը զարգացնելու և տեղեկատվություն փոխանակելու համար,
- փոխանակել տեղեկատվություն լավագույն փորձի վերաբերյալ ԵՄ անդամ երկրների և Հայաստանի դատական մարմինների միջև համագործակցության համար,
- ուսումնասիրել համագործակցության հնարավորությունները Հայաստանի իրավապահ մարմինների և EUROPOL-ի միջև՝ համաձայն Եվրոպոլի կոնվենցիայի և Խորհրդի համապատասխան որոշումների,
- միանալ և կիրառել «Անհատների պաշտպանության հետ կապված անձնական տվյալների ավտոմատացված մշակման մասին» ԵԽ 1981թ. Կոնվենցիան:

4.6 Համագործակցություն հատուկ բնագավառներում, ներառյալ տրանսպորտը, էներգետիկան և բնապահպանությունը

4.6.1. Տրանսպորտ

Մշակել և սկսել իրագործել տրանսպորտի ազգային ռազմավարություն, ներառյալ տրանսպորտային ենթակառուցվածքի զարգացումը.

- սկսել մշակել տրանսպորտի երկարատև ազգային քաղաքականություն, անհրաժեշտության դեպքում կենտրոնանալով եվրոպական և միջազգային չափանիշներին օրենսդրական և կարգավորող մեխանիզմների հետագա մոտարկման վրա, հատկապես՝ անվտանգության և ապահովության հարցերում (տրանսպորտային բոլոր տեսակների համար),
- ամրապնդել Նախարարության կարգավորող և ոլորտի վերահսկման կարողությունները,
- ճանապարհների ֆինանսավորման երկարաժամկետ և թափանցիկ համակարգի ստեղծում՝ գոյություն ունեցող հանրային օգտագործման ճանապարհները պատշաճ վիճակում պահելու համար,

- զարգացնել համագործակցությունն արբանյակային նավիգացիայի ոլորտում (ներառյալ համատեղ հետազոտական գործողությունները և կիրառումները):

Կիրառել ընտրված միջոցներ և բարեփոխումներ ճանապարհային տրանսպորտի ոլորտում.

- մշակել և կիրառել ճանապարհային անվտանգության գործողությունների ծրագիր, (ներառյալ, ի թիվս այլոց ճանապարհային փոխադրումների ապահովության և անվտանգության, հանրության ապահովության, վտանգավոր նյութերի տեղափոխման, ինչպես նաև փոխադրամիջոցների ավտոճանապարհային պիտանելիությունը) ճանապարհային անվտանգությունը բարելավելու համար:

Կիրառել ընտրված միջոցներ և բարեփոխումներ երկաթուղային տրանսպորտի ոլորտում.

- բարելավել երկաթուղային ծառայությունների անվտանգությունը, արագությունը և արդյունավետությունը (փոխգործողունակությունը) և շարունակել բարեփոխումներն օպերատիվ և ֆինանսական կառավարման ասպարեզում:

Կիրառել ընտրված միջոցներ և բարեփոխումներ ավիացիայի ոլորտում.
- ավարտել բանակցությունները Եվրահամայնքի հետ օդային ծառայությունների որոշ ասպեկտների մասին (հորիզոնական) համաձայնագրի շուրջ (մինչև 2007թ. վերջը),
- խրախուսել կարգավորող դաշտի համապատասխանեցումը, ներառյալ անվտանգության և ապահովության ոլորտներում:

Տարածաշրջանային տրանսպորտային համագործակցություն.
- շարունակել ակտիվ համագործակցությունը ԵՄ-Սև և Կասպյան ծովերի ավազանի Տրանսպորտի նախարարների Կոնֆերանսին հաջորդող միջոցառումների համատեքստում, Պանեվրոպական միջանցքների և շրջանների զարգացման (մասնավորապես Բարձր մակարդակի աշխատանքային խմբի միջոցով), ինչպես նաև ՏՐԱՍԵԿԱ ծրագրի շրջանակներում,
- իրականացնել տրանսպորտային առանցքների և առնչվող հորիզոնտալ միջոցառումների մասին Դեպի հարևան երկրներ գլխավոր տրանսեվրոպական տրանսպորտային առանցքների երկարաձգման վերաբերյալ Բաձր մակարդակի խմբի առաջարկությունները,
- անդրադառնալ թուրք-հայկական հարաբերություններին՝ մարդկանց և ապրանքների տեղաշարժման և տարածաշրջանային համագործակցության և զարգացման, համատեքստում:

4.6.2 Էներգետիկա

Էներգետիկ քաղաքականության համապատասխանեցումը ԵՄ էներգետիկ քաղաքականության նպատակներին.
- ուսումնասիրել Intelligent Energy-Europe ծրագրում մասնակցելու միջնաժամկետ հնարավորությունը:

Աստիճանական համապատասխանեցում ԵՄ էլեկտրականության և գազի ներքին շուկաների սկզբունքներին.

- հաստատել միջոցառումների ցանկ՝ ԵՄ էլեկտրականության և գազի ներքին շուկաների սկզբունքներին իրավական և կարգավորող դաշտի աստիճանական համապատասխանեցման նպատակով, կցված հստակ ժամանակացույցով և ֆինանսավորման ծրագրով,

- առավել զարգացնել Հանրային ծառայությունների կարգավորող հանձնաժողովը՝ 2003/54 և 2003/55 Էլեկտրականության և գազի դիրեկտիվների սկզբունքներին համապատասխան,
- շարունակել էլեկտրականության, գազի և ջեռուցման համակարգերի զարգացումը, այդ թվում բազիսային ծանրաբեռնվածության հնարավորությունն ապահովող նոր հզորությունները, ապահովել ոլորտի ֆինանսական կենսունակությունը:

Էներգացանցերի բնագավառի կատարելագործում (մասնավորապես էլեկտրականության և բնական գազի)
- քայլեր ձեռնարկել էներգացանցի կորուստները պակասեցնելու ուղղությամբ,
- բարելավել էներգետիկ համակարգերի ապահովությունը և անվտանգությունը,
- Մեծամորի ատոմակայանի վաղաժամկետ փակման համատեքստում, շարունակել էներգետիկ ցանցերի և ենթակառուցվածքների զարգացումը (օր. գնահատել նոր ցանցերի և միջցանցային կապերի հնարավորությունը, կառուցել գազի ստորգետնյա պահեստարան):

Էներգիայի արդյունավետ օգտագործման և վերականգնվող էներգիայի աղբյուրների ասպարեզում առաջընթաց.

- քայլեր ձեռնարկել գործողությունների ծրագիր մշակելու ուղղությամբ, ընդգրկելով էներգիայի արդյունավետ օգտագործման բարելավմանն ու վերականգնվող էներգիայի աղբյուրների, ներառյալ հիդրոէներգիայի, օգտագործման խրախուսմանն ուղղված ֆինանսական և օրենսդրական ծրագիր, ինչպես նաև տնտեսական մեխանիզմներ,
- ամրապնդել էներգիայի արդյունավետ օգտագործման ու վերականգնվող էներգիայի աղբյուրների խնդիրներով զբաղվող հաստատությունները,
- կիրառել մի շարք միջոցառումներ այդ բնագավառում:

Շարունակել համագործակցությունը միջուկային էներգիայի և միջուկային անվտանգության բնագավառներում.

- միջոցներ ձեռնարկել բոլոր տեսակների ռադիոակտիվ աղբյուրների վերահսկողությունն ուժեղացնելու ուղղությամբ, ներառյալ դրանց և որևէ այլ ռադիոակտիվ նյութերի ապօրինի շրջանառությունը կանխելու նպատակով:

Տարածաշրջանային էներգետիկ համագործակցություն

- շարունակել համագործակցությունը Կասպյան և Սևծովյան տարածաշրջանային էներգետիկ խնդիրների շուրջ՝ այդ թվում էներգետիկ ցանցերի հասանելիության, առևտրի և տրանզիտի վերաբերյալ, ինչպես ԻՆՈԳԵՅԹ-ի, այնպես էլ 2004թ. նոյեմբերին էներգետիկ հարցերով Կասպյան նախարարական համաժողովի արդյունքներով,
- տարածաշրջանային ինտեգրման, ինչպես նաև Եվրոպական Միությանը աստիճանական ինտեգրացիայի նպատակով, խրախուսել Կասպյան էներգառեսուրսների զարգացման հետ կապված դիվերսիֆիկացված ենթակառուցվածքների ստեղծումը և հեշտացնել տարանցիկ փոխադրումը:

4.6.3. Տեղեկատվական հասարակություն և լրատվամիջոցներ

Առաջընթաց տեղեկատվական հասարակության կիրառումների զարգացման և օգտագործման բնագավառում.

- մշակել ոլորտի զարգացման ազգային քաղաքականություն, անդրադառնալով կարգավորող, տնտեսական, տեխնոլոգիական և սոցիալական ասպեկտներին, այդ թվում առաջընթաց ծառայությունները, և խթանել նոր տեխնոլոգիաների և հաղորդակցության էլեկտրոնային միջոցների օգտագործումը և դրանց մասին տեսակետների փոխանակումը

գործարարների, կառավարության և քաղաքացիների կողմից այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են է-Բիզնեսը (ներառյալ չափանիշները է-ստորագրության համար), է-Կառավարությունը, է-Առողջապահությունը, է-Ուսուցումը, է-Մշակույթը,
- աշխատել համապարփակ կարգավորող դաշտի ստեղծման ուղղությամբ, որն իր մեջ կներառի արտոնագրումը, հասանելիությունն ու փոխկապակցվածությունը, արժեքի վրա հիմնված սակագների կազմավորումը, համարակալումը, Համաշխարհային (Ունիվերսալ) ծառայությունը և սպառողների իրավունքները, գաղտնիության պաշտպանությունը և տվյալների անվտանգությունը,
- աշխատանք տանել եվրոպական չափանիշներին լիովին համապատասխանող առուդիո-վիզուալ ոլորտի օրենսդրության ընդունման ուղղությամբ, հետագայում զանգվածային լրատվամիջոցների բնագավառում Եվրոպայի խորհրդի միջազգային գործիքներին մասնակցության ակնկալիքով: Խթանել տեսակետների փոխանակում առուդիո-վիզուալ քաղաքականության վերաբերյալ, ներառյալ համագործակցությունը ռասիզմի և օտարատյացության դեմ պայքարում,
- փոխարինել անալոգիական համակարգը թվայինով ռադիոյի և հեռուստատեսության բնագավառում և համապատասխանեցնել թվային հեռուստատեսության և առուդիո հեռարձակումը եվրոպական չափանիշներին:

Տարածաշրջանային համագործակցություն տեղեկատվական տեխնոլոգիաների և հաղորդակցության բնագավառում.

- աջակցել կովկասյան Ազգային հետազոտությունների և կրթության ցանցերի կապերի ձևավորմանը իրենց եվրոպական գործընկերների հետ GEANT ցանցի միջոցով՝ գիտական համագործակցությանն աջակցելու նպատակով,
- մշակել Հարավային Կովկասում տարածության վրա ուսուցման ծրագրեր:

4.6.4 Բնապահպանություն

Միջոցներ ձեռնարկել բնապահպանության լավ կառավարման համար անհրաժեշտ պայմաններն ապահովելու համար և սկսել դրանց կիրառումը.

- ուժեղացնել վարչական կառույցները և ընթացակարգերը՝ բնապահպանությանը առնչվող խնդիրների ռազմավարական ծրագրավորումը, ինչպես նաև համապատասխան մասնակիցների միջև համակարգումն ապահովելու նպատակով,
- սահմանել ընթացակարգեր բնապահպանական տեղեկատվության մատչելիության և հասարակայնության մասնակցության վերաբերյալ, այդ թվում կիրառելով Օրհուսի կոնվենցիան,
- պատրաստել կանոնավոր հաշվետվություններ շրջակա միջավայրի վիճակի մասին,
- ամրապնդել շրջակա միջավայրի վրա ունեցած ազդեցության գնահատման կառույցներն ու գործառությունները,
- ստեղծել հաղորդակցական ռազմավարություններ բնապահպանության քաղաքականության առավելությունների մասին, աջակցել քաղաքացիական հասարակության դերակատարներին և տեղական իշխանություններին:

Միջոցներ ձեռնարկել շրջակա միջավայրի վատթարացումը կանխարգելելու, մարդու առողջության պաշտպանության և բնական ռեսուրսների բանական օգտագործման ուղղությամբ՝ Յոհաննեսբուրգի գագաթաժողովի շրջանակներում ձեռք բերված պայմանավորվածություններին համապատասխան.

- մշակել օրենսդրություն և հիմնական ընթացակարգեր ու ապահովել բնապահպանության համակարգի առանցքային ոլորտների պլանավորումը, ներառելով մասնավորապես, բնապահպանական ազգային գործողությունների ծրագրում սահմանված ոլորտները (հստակեցնել բնագավառները. դրանք, օրինակ, կարող են

ընդգրկել օդի որակը, ջրի որակը, թափոնների կառավարումը և բնության պաշտպանությունը),
- ամրապնդել վարչական կարողությունները, ներառյալ թույլտվությունների հատկացման, ինչպես նաև իրականացման և վերահսկման համար,
- շարունակել մշակել և իրականացնել առկա ազգային ծրագրերը և նախագծերը կենսաբազմազանության և հատուկ հսկվող տարածքների, ջրային ռեսուրսների ինտեգրացված կառավարման, թափոնների կառավարման, անապատացման ոլորտներում:

Բնապահպանության հարցերում համագործակցության բարելավում.

- կլիմայի փոփոխության վերաբերյալ Կիոտոյի արձանագրությամբ և ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիայով սահմանված դրույթների կենսագործում,
- ապահովել ակտիվ մասնակցություն Եվրոմիության Ջրային նախաձեռնության ծրագրի մաս կազմող Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի ենթածրագրում,
- վավերացնել Շրջակա միջավայրի մասին ՄԱԿ-Եվրոպական տնտեսական հանձնաժողովի (ECE) շրջանակներում համապատասխան կոնվենցիաները,
- սահմանել հարևան պետությունների հետ տարածաշրջանային սերտ համագործակցության հնարավորությունները, մասնավորապես ջրային ոլորտում,
- հնարավոր մասնակցություն Եվրոպական բնապահպանական գործակալության առանձին ծրագրերում:

4.6.5 Գիտության և տեխնոլոգիաներ, հետազոտություններ և զարգացում

Զարգացնել Հայաստանի հնարավորությունները հետազոտությունների և զարգացման ծրագրերում՝ տնտեսությանը և հասարակությանն օժանդակելու նպատակով.
- մշակել Հետազոտությունների և նորամուծությունների քաղաքականությունը Հայաստանի և իր տարածաշրջանի կայուն և հավասարաչափ տնտեսական քաղաքականության նպատակներին համապատասխան, ներառյալ Հայաստանի գիտական համակարգի և համապատասխան կանոնակարգող համակարգի բարեփոխումների պատշաճ ծրագրի միջոցով,
- զարգացնել մարդկային, նյութական և ինստիտուցիոնալ ռեսուրսները՝ հետազոտությունների ոլորտում հնարավորությունները բարելավելու նպատակով, այդ թվում հանրային, ինչպես նաև մասնավոր սեկտորների միջոցով հետազոտությունների բնագավառում համապատասխան և հավելյալ ներդրումների միջոցով:
- ՀՀ-ում գիտական ծրագրերի մրցութային ընտրության նպատակով Անկախ փորձագիտական կառույցի ստեղծում:

Նախապատրաստել և խրախուսել Եվրոպական հետազոտական տարածքում և ԵՄ Համայնքային հետազոտությունների և զարգացման շրջանակային ծրագրերում Հայաստանի ինտեգրումը՝ գիտական արժանիքների հենքի վրա.

- Խրախուսել Հայաստանի գիտական միավորների պատշաճ մասնակցությունը ԵՄ հետազոտությունների և զարգացման շրջանակային ծրագրերում և համատեղ նախագծերում, ինչպես նաև համապատասխան քաղաքականությամբ առաջնորդվող երկխոսության միջոցով որոշել Հայաստանի առաջնայնությունները և հատուկ կարիքները,
- աջակցել Հայաստանի ինտեգրացիային բարձր մակարդակի գիտական փոխանակման ծրագրերում՝ ամրապնդելով Հայաստանի մասնակցությունը միջազգային Մարի Կյուրի կրթաթոշակներին, ներառյալ սատարումը վերադարձի մեխանիզմներին,

4.7 Մարդկային շփումներ

4.7.1 *Կրթություն, վերապատրաստում և երիտասարդության հարցեր*

Բարեփոխել և արդիականացնել կրթական և վերապատրաստման համակարգերը՝ Եվրամիության չափանիշներին և պրակտիկային համապատասխանելու հայաստանյան ծրագրերի շրջանակներում.

- երաշխավորել բարձր որակի ուսուցման մատչելիությունը բոլոր ցանկացողների համար բավարար քանակի պետական ծախսերի ապահովման, ոլորտի թափանցիկության և հաշվետվելիության ապահովման, կրթական և վերապատրաստման համակարգերի հետագա բարեփոխումների և օպտիմալացման միջոցով, այդ թվում՝ մասնագիտական կրթության, վերապատրաստման ծրագրերի և առանց տարիքային սահմանափակումների ուսուցման միջոցով, մասնավորապես՝ կիրառելով ազգային կրթական բարեփոխումների ռազմավարություն,
- բարեփոխել բարձրագույն կրթական համակարգը՝ «Բոլոնիայի գործընթացի» սկզբունքների համաձայն, դյուրացնելու Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում Հայաստանի բարձրագույն կրթության աստիճանների և որակավորումների ճանաչումը, և ընդլայնել քաղաքականության զարգացման և կենսագործման կրթական համակարգի տեղական կարողությունը: Խթանել մարդկային ռեսուրսների և մարդկային կապիտալի զարգացումն առանց տարիքային սահմանափակման ուսանելու հեռանկարով, նպաստել TEMPUS ծրագրի միջոցով բարձրագույն կրթության բարեփոխմանը և ԵՄ-ում և Հայաստանում բարձրագույն կրթության ինստիտուտների միջև համագործակցությանը,
- բարձրացնել այն կազմակերպությունների և հաստատությունների կարողությունները, որոնց գործունեությունը միտված է եվրոպական չափանիշներին համապատասխան կրթության և վերապատրաստման բնագավառների ծրագրերի որակի բարձրացմանը և բարելավմանը՝ օգտագործելով, օրինակ, ՏԵՄՊՈՒՍ (TEMPUS) ծրագրի առաջարկած մեխանիզմները,
- բարձրագույն և մասնագիտական կրթությունը համապատասխանեցնել աշխատանքի շուկայի պահանջներին՝ ի թիվս այլոց ավելացնելով գործատուների կողմից ֆինանսավորումը և սոցիալական գործընկերների և քաղաքացիական հասարակության մասնակցության մակարդակը,
- ապահովել կրթության ժողովրդավարական և ապակենտրոնացված կառավարումը, ընդգրկելով ծնողներին և ուսանողներին,
- ուժեղացնել շեշտադրումը մարդու և երեխաների իրավունքների և հիմնարար ազատությունների վրա, խթանել կրթությունը կայուն զարգացման ոլորտում, ներդնել տեղեկատվական տեխնոլոգիաներ,
- ապահովել միջնակարգ կրթության համակարգում իրենց մայրենի լեզվով կրթություն ստանալու ազգային փոքրամասնությունների իրավունքը,

Զարգացնել համագործակցությունը կրթության, վերապատրաստման և երիտասարդության բնագավառներում.

- Շարունակել և ամրապնդել քաղաքական երկխոսություն Եվրոմիության և Հայաստանի իշխանությունների միջև կրթության և վերապատրաստման բնագավառում,
- խրախուսել ուսանողների տեղաշարժը Erasmus Mundus, TEMPUS ծրագրերին և նոր կրթաթոշակային համակարգերի մասնակցելու միջոցով,
- աշխուժացնել երիտասարդների փոխանակումները և համագործակցությունը, մասնավորապես, Հարավային Կովկասի երեք պետությունների միջև՝ համագործակցելով Եվրոմիության գործընկերների հետ, ոչ-ավանդական կրթության բնագավառում և YOUTH ծրագրի միջոցով զարգացնել միջմշակութային երկխոսությունը,
- զարգացնել համագործակցությունը մարդու իրավունքների դասավանդման ոլորտում՝ ռասիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարելու համար: Ուսումնասիրել

մարդկության դեմ հանցագործությունների դեմ պայքարում վերապատրաստման հնարավորությունները:

4.7.2 Առողջապահություն

Առողջապահության բնագավառի բարեփոխումներ.

- շարունակել առողջապահության բնագավառի բարեփոխումները՝ ամբողջ բնակչության և հատկապես սոցիալապես անապահով խմբերի համար մատչելիության մակարդակը բարձրացնելու համար, բարելավել բնագավառի և դրա հաստատությունների, այդ թվում լաբորատորիաների, կառուցվածքը, կարգավորող դաշտը, որակը և արդյունավետությունը, վերապատրաստել առողջապահության ոլորտի աշխատակիցներին՝ տեղեկատվության և փորձի փոխանակման միջոցով: Առողջապահության բյուջեում ավելացնել առաջնային բժշկական օգնության ծառայությունների, կանխարգելումների և առողջ ապրելակերպի խթանման համար նախատեսված հատկացումները, կիրառել առողջապահության ֆինանսավորման կայուն ռազմավարություն, ներառյալ առողջության ապահովագրության ծրագիր, բարելավել առողջական վիճակի, վտանգների և դետերմինանտների մասին տեղեկատվության որակը և հասանելիությունը,

4.7.3. Մշակույթ

Ամրապնդել մշակութային համագործակցությունը.

- ուսումնասիրել Եվրոմիության մշակութային ծրագրերի շրջանակներում համագործակցության հնարավորությունները, ներառյալ հայկական մշակութային ժառանգության խթանումը Եվրոպայում,
- Փոխանակել կարծիքներ «Մշակութային արտահայտման բազմազանության պաշտպանության և խրախուսման մասին» 2005թ. UNESCO-ի Կոնվենցիայի վերաբերյալ, ինչպես նաև խրախուսել փաստաթղթի վավերացումը և իրականացումը:

5. ՄՈՆԻՏՈՐԻՆԳ

Գործողությունների ծրագիրը պաշտոնական հաստատման է ներկայացվելու ԵՄ-Հայաստան Համագործակցության խորհրդին: Գործողությունների ծրագիրը ուղղորդելու է ԵՄ-ի և Հայաստանի միջև աշխատանքը: Անհրաժեշտության դեպքում, եթե կոնկրետ միջոցառումների համար պահանջվեն եվրոպական իրավական որոշումներ, Եվրոպական հանձնաժողովը կառաջարկի Խորհրդին ընդունել համապատասխան բանակցային ցուցումներ:

Գործընկերության և համագործակցության համաձայնագրով ստեղծված համատեղ մարմինները կխրախուսեն և կվերահսկեն Գործողությունների ծրագրի իրականացումը: Համապատասխան համաձայնագրերի ներքո գործող կառույցները, ըստ անհրաժեշտության, կարող են վերանայվել՝ ապահովելու Եվրոպական հարևանության քաղաքականության բոլոր առաջնայնությունների արտացոլումը:

Գործողությունների ծրագրի իրականացման առաջընթացը կորոշվի համատեղ համաձայնեցված չափանիշների հիման վրա և Եվրոհանձնաժողովը, գլխավոր քարտուղարի/Բարձր ներկայացուցչի հետ սերտ համագործակցելով, պատշաճ կերպով կանոնավոր ժամանակահատվածներում կներկայացնի Գործողությունների ծրագրի կատարման վերաբերյալ զեկույցներ: Դրա համար Հայաստանին կառաջարկվի տրամադրել տեղեկատվություն: Եվրոհանձնաժողովը սերտորեն կհամագործակցի այնպիսի կազմակերպությունների հետ, ինչպիսիք են Եվրոպայի Խորհուրդը, ԵԱՀԿ-ն, ՄԱԿ-ի համապատասխան մարմինները և միջազգային ֆինանսական հաստատությունները: Գործողությունների ծրագրի իրականացման առաջին զեկույցը կկատարվի դրա ընդունումից երկու տարի հետո:

Գործողությունների ծրագիրը կարող է կանոնավոր կերպով փոփոխվել և/կամ արդիականացվել՝ նշված առաջնայնությունների ուղղությամբ առաջընթացը արտացոլելու նպատակով: